№ 184 ՈՒՐԲԱԹ 22 ՕԳՈՍՏՈՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 22 ՕԳՈՍՏՈՍԻ № 184

ՄՇԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:
ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝
ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԻԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ԶՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրթին:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը

յայտնում է, որ վերաքննութիւնները սկսվելու են օգոստոսի 25-ին, նոր եկողների քննութիւնները՝ 28-ին, իսկ ուսումը՝ սեպտեմբերի 1-ին:
Քննութիւնները տեղի են ունենալու Ցաղխանեան դպրոցում, երեկոյեան ժամը 4-ից:
(ա.օ) առ. 793. 3—1

ՈՒԹԴԱՍԵԱՆ ԿԱՆԱՑԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Գեղական ուսումնարանների ԲՈԼՈՐ իրաւունքներով:

Հիմնադիր՝ Լ. Փ. ՊԵՏՐԱՇԵՒՍԿԱՅԱ

(Միքայէլեան փողոց, № 170)

յայտնում է, որ ընդունելութեան քննութիւնները մեծ ու փոքր պատրաստականների համար՝ օգոստոսի 23-ին I, II և III դասար. օգոստոսի 25-ին և 26-ին IV և V դասար. օգոստոսի 27-ին և 28-ին:

ՈՒՍՄԱՆ ՍԿԻԶԲԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ:

Մայրենի լեզուն հայերի և վրացիների համար պարտագիր է առաջինից մինչև վերջին դասատունը:
Խնդիրները տեսչի անունով ընդունվում են ամեն օր մինչև 12 ժամը ցերը: Տեսուչը անձամբ ընդունում է մինչև օգոստոսի 20-ը՝ ցերը. 12—1 ժ., իսկ օգոստոսի 20-ից յետոյ ամեն օր:
առ. (օ. մ.) 772. 6—4

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀԱՐԻՒՐՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՑԱՋՈՐԴԸ

Հռոմէական կաթոլիկ եկեղեցին իր հիմնադիրը համարում է ձկնորս Պետրոս առաքեալին.

Նա համարվում է Հռոմի առաջին episkոպոսը, ուրեմն առաջին պապը:

Այս օրերս վախճանված Պիոս X Սարտո պապը Պետրոս առաքեալի 112-րդ յաջորդն էր:

Հռոմէական եկեղեցու իշխանները՝ կարդինալները՝ արդէն կազմել են կոնկլաւ և շուտով կընտրեն Պետրոս առաքեալի 113-րդ յաջորդը:

Կաթոլիկ եկեղեցու պետի մահվան և նոր պետի ընտրութեան դէպքերը միշտ համարվել են քաղաքական խոշոր դէպքեր և յարուցել են ահագին հետաքրքրութիւն. Չը պէտք է մոռանալ, որ երկրագնդի վրա 270 միլիոն կաթոլիկ կայ, և այդ ահագին ժողովրդի կամ հօտի հովուապետը Հռոմի պապն է, որ մինչև 1870 թ. վայելում էր նաև աշխարհական իշխանութիւն և համարվում էր Հռոմի թագաւոր: Եւ սակայն եթէ այսօր Պիոս X պապի մահը և կոնկլաւի գումարումը առանձին հետաքրքրութիւն չեն յարուցանում, կարելի է ասել նոյնիսկ աննկատելի են անցնում, դրա պատճառը համաեւրոպական պատերազմն է, որի առաջ չքանում են բոլոր դէպքերը և նսեմանում բոլոր այլ հետաքրքրութիւնները:

Այնու ամենայնիւ նոր պապի ընտրութիւնը ունի քաղաքական և բարոյական մեծ նշանակութիւն աշխարհի համար: Արդեօք Պետրոս առաքեալի 113-րդ յաջորդը կը շարունակէ իր վերջին երեք նախորդների՝ Պիոս IX, Լեոն XIII և Պիոս X պապերի քաղաքականութիւնը, այն է՝ անհաշտ քաղաքականութիւնը իտալական թագաւորութեան վերաբերմամբ, թէ կընդգրկէ հաշտութեան ուղին, որ միակ վայելն է քրիստոնէական եկեղեցու պետին. այդ հարցը կարևոր նշանակութիւն ունի ոչ միայն 270 միլիոն կաթոլիկների, այլ և ամբողջ քրիստոնէական աշխարհի համար:

Բայց ինչպիսի՞ քաղաքականութիւն էր, որ ընդգրկել էին յիշեալ երեք պապերը:

Յայտնի է, որ 1870 թ. Սավոյայի թագաւոր Վիկտոր Էմմանուէլը իր զորքերով գրաւեց Հռոմը, վերջ դրեց պապերի աշխարհական իշխանութեան և հաստատեց Իտալիայի թագաւորութիւնը, հռչակելով Հռոմը Իբրև մայրաքաղաք նոր պետութեան: Այդ ժամանակ պապ էր Պիոս IX, որ բնաւ չը կամեցաւ հաշտվել կատարված իրողութեան հետ, համարեց Վ. Էմմանուէլի ակտը ուղուրպացիա, յափշտակութիւն, բանադրեց իտալական նոր թագաւորութիւնը, հրատարակեց իրան «Իբրև բանտարկեալ Վատիկանում» և յայտարարեց, որ թէ ինքը, թէ իր յաջորդները իրանց ոտքը դուրս չը պէտք է դնեն Վատիկանից, մինչև որ իրանց չը վերադարձվի յափշտակված աշխարհական իշխանութիւնը: Բացի դրանից, պապը պատուիրեց անէծքի սպառնալիքով բոլոր Ջերմեռանդ կաթոլիկներին չը մասնակցել նոր թագաւորութեան գործերին, ընտրութիւններին: Այդպիսով նա ասատիկ մեծ փորձանքի ենթարկեց իտալացիների կրօնական և հայրենասիրական զգացումները, որովհետև եթէ կրօնական զգացումը թելադրում էր իտալացուն անհալ պապի հրամանին, հայրենասիրական զգացումը թելադրում էր անդոնել և չը կատարել այդ հրամանը: Դրանով իտալացու խղճմտանքի մէջ մեծ պայքար էր մղվում, իսկ իտալական ժողովրդի 9/10-ը Ջերմեռանդ կաթոլիկ է: Բոլոր հայրենասէրների Ջանքերը՝ որևէ հաշտութեան, կոմպրոմիսի մի դուռն բանալ՝ ապարդիւն անցան: Պիոս IX մաց անդրդուելի և անսասան: Երբ նա վախճանվեց 1878 թ. և պապ ընտրվեց Լեոն XIII, որ յայտնի էր իբրև նուրբ քաղաքագէտ և մեծ կրթութեան տէր, յոյսերը մեծ էին, որ նա կը գտնէ հաշտութեան ճանապարհը, և Ջերմեռանդ կաթոլիկների հաւատն ու հայրենասիրութիւնը այլ ևս փորձանքի չեն ենթարկվի: Լեոն XIII ըմբռնեց անհրաժեշտութիւնն այդ ելքի, բայց պապական աթոռին հացված վերքերը դեռ շատ թարմ և շատ խոր լինելով, անուրջները պապական աշխարհական իշխանութեան մասին դեռ բոլորովին չքացած չը լինելով, անհաշտ և անդրալեռնական (ուլտրամոնտէն) ձգտումները կաթոլիկ հոգևորականութեան մեծ մասի մէջ դեռ շատ վառ լինելով, նա չը յանդգնեց այդպիսի հարձակ քայլ առնել, այլ, Իբրև դիպլոմատ, աշխատեց մասնաւոր, անպաշտօն միջոցներով հաշտարար ոգի և ուղղութիւն ցոյց տալ: Պաշտօնապէս նա վերահաստատեց իր նախորդի վրճիռը՝ հրատարակելով իրան «Վատիկանի բանտարկեալ» և իտալական թագաւորին՝ ուղուրպատոր, յափշտակիչ, պահանջելով վերադարձնել եկեղեցուն աշխարհական իշխանութիւնը, բայց առանին կերպով նա այլ ևս արգելք չէր դնում հաւատացեալ կաթոլիկներին մասնակցել իբրև քաղաքացիներ՝ պետութեան գործերին և ընտրութիւններին: Լեոն XIII պապը պատմական մի խոշոր քայլ ևս կատարեց. տեսնելով որ սոցիալիզմը թշնամաբար է վերաբերվում եկեղեցուն և բանւորների ահագին բանակը խորթանում է եկեղեցուց, համարելով սրան իբրև պաշտպան կապիտալիզմի և բուրժուազիայի, նա սկսեց պարապվել և սոցիալական հարցերով, բանւորների կեանքով և հրատարակեց մի քանի կոնդակներ յօգուտ բանւորների և սոցիալական շարժման: Այսպէս, օրինակ, նա քաջալերեց և խրախուսեց այն հոգևորականներին, որոնք, ինչպէս Վենետիկի պատրիարք Զուզէպպէ Սարտոն արքեպիսկոպոսը, սկսել էին մի քանի ձեռնարկութիւններ բանւորական դատի բարեկեցութեան համար: Թէ Լեոն XIII և թէ իր յաջորդ Զուզէպպէ Սարտոն արքեպիսկոպոսը (Պիոս X) ըմբռնել էին այն ճշմարտութիւնը, որ ժողովրդական մասսաները, աշխատաւոր դասերն այլ ևս չեն կարող բաւականանալ եկեղեցու խոստացած բարիքներով հանդերձեալ աշխարհում, թէ անցել են անդառնալիօրէն այն ժամանակները, երբ ժողովուրդը ամեն տեսակ զրկանք, նեղութիւն յանձն էր առնում և համբերութեամբ տանում այն հաւատով և յոյսով, որ հանդերձեալ աշխարհում վայելելու է յաւիտենական ամեն բարիք ի վարձատրութիւն իր կրած զրկանքի և նեղութիւնների. թէ ժողովուրդը կամենում է այժմ իսկ, այս աշխարհի վրա, ունենալ այն բարիքների մի մասը, որ վայելում են հարուստները և իշխանաւորները: Եւ ցոյց տալու համար, որ կաթոլիկ եկեղեցին բնաւ դէմ չէ բանւորական և աշխատաւոր դասերի այդ ձգտման, նրանք սկսեցին հիմնել կղերական առևտրական և բարեգործական հաստատութիւններ: Բաղցածների և անգործների համար հիմնվում էին կաթոլիկ գործարաններ, ֆաբրիկաներ, արհեստանոցներ, աշխատանք գտնելու համար տեղեկատու և միջնորդ գրասենեակներ. անապատանների համար բացվում էին ապաստարաններ և աշխատանքի տներ. հիւանդների համար՝ կաթոլիկ հիւանդանոցներ. մանր արհեստաւորների համար՝ կօօպերատիվ և մանր բանկային, փոխադարձ օգնութեան ընկերութիւններ, դրամարկղեր. երկրագործների համար՝ պահեստներ, շտեմարաններ և այլն: Մի խօսքով, կաթոլիկ եկեղեցին ցոյց տուեց, որ ինքը հոգս է տանում ժողովրդի ոչ միայն հոգևոր-բարոյական, այլ և տնտեսական կարիքների մասին, և դրանով գրաւեց ժողովրդական մասսաները, որոնց մէջ տարածվում էին սոցիալիստական մթքեր:

Երբ Լեոն XIII-ի մահից յետոյ կոնկլաւը 1903 թ. պապ ընտրեց վերոյիշեալ Զուզէպպէ Սարտո արքեպիսկոպոսին, որ յայտնի էր, բացի իր վերոյիշեալ գործերից, նաև իբրև մի վերին աստիճանի պարզ, սակաւապէտ հոգևորական, համբերող և հաշտարար, շատերը համոզված էին, որ նա հաշտութեան ձեռք կը մեկնի իտալական պետութեան և այլ ևս չի կամենայ նկատել իրան «Վատիկանի բանտարկեալ». այս յոյսն ունէին շատերը մանաւանդ նրա համար, որ նա, իբրև իտալացի, հայրենասէր էր, սիրում էր Իտալիան, նրա լեզուն և նրա պատմութիւնը: Եւ, ճշմարիտ, Սարտո արքեպիսկոպոսը, որ ընդունեց Պիոս X անունը, սկզբում կամեցաւ այդպէս վարվել, բայց անդրալեռնական հոգևորականութիւնը և եզուիտները յիշեցրին նրան, որ նա այլ ևս Սարտո եկեղեցականը չէ, այլ կաթոլիկ եկեղեցու պետը, որ պարտաւոր է պաշտպանել եկեղեցու շահերը: Եւ նա տեղի տուեց հակառակ իր ձգտումներին և ոգուն:

Այժմ հարց է ծագում, թէ արդեօք նրա յաջորդը, որ շուտով պէտք է ընտրվի, շարունակելո՞ւ է իր նախորդների քաղաքականութիւնը, թէ՞ ի նկատի ունենալով, որ պապերի աշխարհական իշխանութեան վերականգնումը այլ ևս անհեթեթութիւն է համարվում նոյն իսկ Ջերմեռանդ կաթոլիկների աչքում, ըմբռնելու է, թէ հասել է ժամանակը, որ կաթոլիկ եկեղեցին հաշտվի Իտալիայի պետական գաղափարի հետ և իր մեծութիւնը, հեղինակութիւնը որոնէ միայն բարոյական աշխարհի մէջ:

Այդ տեսակէտով նոր պապի ընտրութիւնը մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում.

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 օգոստոսի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից՝ օգոստոսի 20-ին. «Ցերեկվայ ժամը 12-ին, եօթ օր տևող կռուից յետոյ, մեր զօրքը գրաւեց Լվովի առաջին ամուր դիրքերը և մօտեցաւ Լվովի գլխաւոր բերդերին: Օգոստոսի 19-ին, չափազանց յամառ կռուից յետոյ, աւստրիացիք փախան անկարգ, ձգելով թեթև ու ծանր տեսակի թնդանօթները և շարժական խոհանոցները: Մեր առաջնեթաց զօրամասերը և հեծելազօրը հալածեցին թշնամուն, որ ունեցաւ ահագին կորուստներ սպանվածներով, վիրաւորվածներով և գերիներով: Լվովի ուղղութեամբ գործող աւստրիական զօրքը բաղկացած էր 3-րդ, 11-րդ և 12-րդ զօրաբանակներից և 7-րդ ու 14-րդ զօրաբանակների զօրամասերից. նա, ըստ երևոյթին, բոլորովին չարդվել է: Գնիլայա Լիպայից նահանջող աւստրիական զօրքերին հալածելիս՝ մենք ձեռք ձգեցինք կրկին 31 թնդանօթ: Մեր զօրքերը ամբողջ ճանապարհին գտնում են ձգված սայլեր զանազան իրերով: Լվովի ուղղութեամբ մենք վերցրել ենք ընդամենը մօտ 150 թնդանօթ»:

Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեանը օգոստոսի 20-ից. «Բաղդաւոր եմ ուրախացնել Ձերդ Մեծութեանն այն յաղթութեամբ, որ տարաւ զինեալ Բուգսկիի զօրքը Լվովի մօտ: Եօթն օրվայ անընդհատ կռուից յետոյ աւստրիացիք նահանջում են միանգամայն անկարգ, տեղ-տեղ փախչում են, ձգելով թեթև ու ծանր թընդանօթները, սայլեր ու արտիլէրիական ռազմանիւթեր: Իսկ մինչև այդ վճռական կռիւը զենելու Բուգսկիի զօրքը եօթն օրվայ ընթացքում ձեռք էր ձգել 44 թնդանօթ, շատ ձեռքի զէնք ու մեծ քանակութեամբ գնդակացիրներ»:

Արևելեան Պրուսիա փոխադրված գերմանացի զօրքերի թիւը խոշոր է:

Աւստրիացիք ամուր դիրք են բռնում Գրոդէկի մօտերը՝ Լվովից 30 վերստ դէպի հարաւ-արևմուտք:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Օգոստոսի 15-ին Լաշչովի մօտ բոլորովին ջարդվեց աւստրիական 15-րդ զօրաբանակը: Երկու զօրահրամանատար և շտաբի պետը սպանվեցին: Գերվեցին 100 օֆիցէր, 4000 զինուոր և 600 վիրաւոր: Ձեռք ձգեցինք մենք 65-րդ գնդի պրոշակը և 30 թնդանօթ: Ամբողջ դաշտը ծածկված է դիակներով»:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ

ՕՍՏԵՆԴԷ.—Հաղորդում են, որ գերմանական մեծաքանակ զօրքեր Բրիւսսէլից դիմում են դէպի Լիէժ՝ Մալմեից դէպի հիւսիս-արևելք: Գերմանացիք շարունակում են դիմել նոյնպէս դէպի արևմուտք Բրիւսսէլից, Սուասդալ-Աշ ռազմածով, դիմելով ըստ երևոյթին դէպի Տէրմոնդու և Սէն-Նիկլասու: Այդ հանգամանքը ստիպում է կարծել, որ գերմանացիք մտադիր են շրջապատել Անտվերպէնը:

ԱՆՏՎԵՐՊԷՆ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ գերման զօրքերի տեղափոխութիւնը Աշի շրջակայքում առիթ տուեց կարծելու, թէ մտադրութիւն կայ շարժվել Տէրմոնդուի կողմը: Բէլգիական զօրքերը, Վալոնդի վրա հակելու նպատակով, ստացան օժանդակ օգնութիւն: Թշնամին օգոստոսի 19-ի օրը մուտք չը գործեց դէպի հիւսիս Աշից: հակառակորդը նմանապէս համարեա գրավել է Նինօվը, բայց շատ գերմանացի վիրաւորներ են այնտեղից Բրիւսսէլ: Վալոնդի հետ օգոստոսի 19-ին հաղորդակցութիւնը վերահաստատվեց: Անտվերպէն նահանգում և Լիմբուրգի մեծ մասում դրութիւնը անփոփոխ է: Օգոստոսի 20-ի առաւօտը գերմանական զօրքերը ռմբակոծեցին Մալինը, ուղղելով կրակը դէպի մայր տաճարը:

ԼՕՆԴՕՆ.—Հաղորդում են, որ «Ցեպպէլինը» նորից առաւօտը թռիչք կատարեց Անտվերպէնի վրա և ենթարկվեց ուժեղ թնդանօթաձգութեան ու հրացանաձգութեան. մանրամասնութիւնները յայտնի չեն:

ՊԱՐԻԶ.—Մի քանի աէրոպլան նշանակված են Պարիզի վրա թռիչքներ կատարող գերմանական աէրոպլաններին հալածելու համար:

Երեկոյեան զինուորական մինիստրութիւնը հրատարակեց հետևեալ հաղորդագրութիւնը. «Ի նկատի ունենալով, որ գերմանացիք շարունակում են պաշարողական շարժումը, ձախ թևը, վճռական ճակատամարտից խուսափելու համար, որպիսին կարող էր տեղի ունենալ Ֆրանսիացիներին անպատշաճ պայմաններում, նահանջեց մասամբ դէպի հարաւ, մասամբ դէպի հարաւ-արևմուտք, ուր Բեանէլի շրջանում սկսված կռիւը հնարաւորութիւն տուեց Ֆրանսիացիներին ուժեղ կանգնեցնել թշնամուն: Կենտրօնում և աջ զօրաճակատում Վալը-Լօթարինգիա-Վոսգէզներ գծում դրութիւնը մնում է նախկինը»:

Պաշտօնական հաղորդագրութիւնը ազդարարում է. «Մեր աջ զօրաթեւում գերմանական մի հեծելազօր, որ դիմում էր դէպի Կոմպիէնի անտառը, օգոստոսի 19-ին ընդհարում ունեցաւ անգլիացիների հետ, որոնք նրանից խլեցին 10 թնդանօթ: Մի ուրիշ գերմանական հեծելազօր շարժվեց մինչև Սօասսոն-Անիպլի-Լէշտաս ռազմագիծը՝ Բեաէլի և Մաասի շրջանում հակառակորդը ակտիվ գործողութիւնների չը դիմեց: Լօթարինգիայում մենք շարունակեցինք առաջանալ Սանոն գետի աջ ափին: Հարաւում դրութիւնը անփոփոխ է: Գերմանացիք ըստ երևոյթին թողել են Բէլֆօրի դիմաց անշան զօրք: Հիւսիսում Լիլլում, Արրասում, Դուէում, Բէթիւնէում և Լանսում թշնամու հետք չը կայ: Բէլգիայից հաղորդում են, որ գերմանական զօրաբանակների շատ զօրամասեր անցնում են Բէլգիայի վրայով դէպի Գերմանիա»:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Տեղեկութիւններ են ստացվել, որ Լօթարինգիայում գերմանական զօրքերը ծանր կորուստներ են ունեցել:

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—Բերլինից պաշտօնապէս հաղորդում են, որ Ժիվէ բերդն անձնատուր է եղել:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌԱԶՄԱԴԱՇՏ

ԲԷԼԳՐԱԴ.—Երէկ երեկոյեան ժամը 11-ի մօտերը աւստրիացիք ուժեղ ռմբակոծութեան ենթարկեցին Բէլգրադի արևմտեան մասերը: Կէսգիշերից յետոյ սերբական արտիլէրիան սկսեց եռանդով պատասխանել և մօտաւորապէս առ, ժ. 2-ին ստիպեց աւստրիական արտիլէրիային դադարեցնել կրակը: Ռմբակոծութիւնը քաղաքին մեծ չը պատճառեց:

ՑԷՏԻՆԻԷ.—Աւստրիական զօրքերը օգոստոսի 19-ին տաք կռուից յետոյ ստիպեցին պարտութիւն կրեցին Վուչիդոսի մօտերը և ստիպված եղան նահանջել Բիլէցայի կողմը: Զերբօզօրցիք հետապնդում են նրանց: Մանրամասնութիւններ ստացված չեն:

Զերբօզօրցիք զինուորական մինիստր Վուկոտիչի հրամանատարութեամբ դիմեցին յարձակման աւստրօ-ունգարական զօրքերի դիմաց. որոնք Պլեվլէի մօտից նահանջեցին դէպի Զայնիցա:

ՆԻՇ.—Թշնամին թոյլ թնդանօթաձգութիւն սկսեց Բէլգրադի շրջակայքում:

Օգոստոսի 19-ին թշնամին ռմբակոծեց Զաբրէժը, բայց սերբական արտիլէրիան ստիպեց նրան լռել:

ԾՈՎԻ ՎՐԱ

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բրիտանական մի յածանաւ գրաւեց գերմանական «Ս. Եկատէրինա» շոգենաւը: Շոգենաւի վրա կար 5 միլիոն արժողութեան ապրանք:

ՋԻՆՈՎ.—18 եապոնական շոգենաւով զօրքեր են մեկնել Լունկօու՝ Ցինդաոն ցամաքի կողմից պաշարելու համար:

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Կարմիր Խաչի գլխաւոր վարչութեանը հաղորդում են, որ Վարշավայում Զօրահրամանատարի թոյլտուութեամբ հաստատվել է քաղաքացիական յանձնաժողով վիրաւորներին օգնելու հա-

մաբ, որի գլուխ կանգնել են լեհ հասարակութեան աչքի ընկնող ներկայացուցիչները։

Սինոդի օրհնութեամբ բացվում է հոգևոր կրթական հաստատութիւնների Կարմիր Խաչի կոմիտէ Ֆինլանդական արքեպիսկոպոս Սերգիի Նախագահութեամբ։

Մինիստրների խորհուրդը որոշեց պետական գանձատան միջոցները շատացնելու համար մտցնել օգոստոսի 20-ից՝ պատերազմի ժամանակ՝ պատահական առքուվաճառների բարձրացված տարիֆներ հետևեալ չափով. քաղաքից դուրս ուղարկվող ամեն մի հասարակ 15 գրամ թղթակցութիւնը վճարվում է 7 կոպէկ նամակագրոշմի փոխարէն 10 կոպէկանոց նամակագրոշմով, քաղաքային նամակներ և բացիկները՝ 5 կոպէկանոց, ապահովագրեալ նամակները՝ 10 կոպ։ Պետութեան ներսում հեռագրի իւրաքանչիւր խօսքի վճարը այսուհետև լինելու է 7 կոպէկ, քաղաքային հեռագիրների ամեն մի խօսքի համար 2 կ., Ֆինլանդիայում՝ 15 պէնի՝ խօսքին։

Մինիստրների խորհուրդը 150,000 ռ. յատկացրեց մամուլի գլխաւոր վարչութիւնից հաստատված մասնաժողովին հանրամատչելի հայրենասիրական բրոշիւրներ հրատարակելու՝ ազգաբնակութեանը պատերազմի ընթացքի հետ ծանօթացնելու համար։

Բարձրագոյն բեսկրիպտով Թագաւոր Կայսրը բարեհաճեց յանձնարարել Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնային՝ հոգալ Պետրոգրադի զինուորական հիւանդանոցներում խնամվող վիրաւորների և հիւանդների մասին։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Գեներալ-ադիւտանտ Ֆոն Ռենենկամպֆին ռազմական ընդունակութիւնների համար շնորհվեց Վլադիմիրի 3-րդ կարգի շքանշան։

ՄԻՆՍԿ.—Անցկացրին աւստրիացի 8 օֆիցերի և 400 զինուորի։

ԲՈԼԳԱՐԻԱՅԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Սոֆիա, 21 օգոստոսի

Բոլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ ի պատասխանի այն քայլերի, որոնք ըստեցին երրեակ համաձայնութեան պետութիւնների կողմից՝ Բոլգարիայով 600 գերմանացի օֆիցէրի և նաւաստու Կ. Պոլիս անցնելու առիթով, բոլգար կառավարութիւնը վկայեց, որ, յիրաւի, վերջերս Բոլգարիայով Ռումինիայից անցան 600 գերմանացի, բայց որ նրանք հագած էին քաղաքացու զգեստ և ունէին կանոնաւոր անցագրեր։ Նրանք յայտնեցին, որ խմբով դիմում են Կ. Պոլիս, ուստի և հիմք չը կայ կշտամբել բոլգարական իշխանութիւններին, թէ իբր նրանք միջոցներ ձեռք չառան ճշդելու, թէ, արդարև, նրանք անցագրերում նշանակված գերմանացիներն են։ Բոլգար կառավարութիւնը ամենակտրուկ կերպով պնդում է, որ նա ոչ մի տեղեկութիւն չունէր այն մասին, թէ անցնելու են գերմանացիներ կամ օտարազգիներ յատուկ գնացքով։

Բոլգարիայում տիրող օրէնքների ու կանոնների հիման վրա, յատուկ գնացքներ ստանալը կախված է բացառապէս երկաթուղային կայարանների կառավարիչներից, որոնք միայն պարտաւոր են պայմանաւորվել երկաթուղային գլխաւոր վարչութեան հետ այդ տեսակ գնացքների ժամանակացուցակի մասին։ Բացի այդ, յիշեալ գերմանացիք անցան Ռումինիայի վրայով յատուկ գնացքով միևնոյն պայմաններում, չը հանդիպելով ոչ մի դժուարութեան, հետևաբար այդ տեսակէտից էլ այնպիսի բան տեղի չունեցաւ, որ գրաւէր Բուշրուկի իշխանութիւնների ուշադրութիւնը։

Ի նկատի ունենալով այդ, Բոլգարիան անհրաժեշտ է գտնում բողոքել այն կասկածանքների դէմ, որոնք կարող էին առաջ գալ խիստ չէզոքութիւն պահելու նրա վրա։ Ռազմական անկեղծութեան վերաբերմամբ։ Եթէ հարկ լինի ապացոյցներ ներկայացնել, որոնք հաստատէին բոլգարական կառավարութեան չէզոքութեան բնոյթը, միևնոյն էլ այն կը լինի, որ նա՝ կառավարութիւնը ուշիուշով հսկում է սերբական սահմանի վրա և արդելափակ է հանդիսանում հրաւակախմբերի տեղափոխութեան Մակեդոնիայից։ Կառավարութիւնը այսուհետև ևս ամեն ջանք կը գործադրէ դէպի Կայսերական կառավարութիւնը տածած իր յարգանքի նոր ապացոյց տալու, նաև չէզոքութիւնից մազ անգամ չը շեղվելու հաստատ վճիռը պահպանելու։

Այս պատասխանը այսօր յանձնվեց ռուսաց միսսիային։ Համանման յայտարարութիւն օգ. 20-ին կուղղվի նաև ֆրանսիական և անգլիական միսսիաներին։ (Հ. Գ.)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—Միացեալ Պետութիւնների դեսպանի հիմնած ամերիկեան մասնաժողովը դիմեց Միլերանին, խնդրելով ապացոյցներ տալ, որ Պարիզի վրա նետած ռումբերը պատկանում էին գերմանացի օդաչուներին։ Միլերանը ներկայացրեց մասնաժողովին գործին վերաբերեալ բոլոր փաստերը։ Դեսպանը վճռեց զեկուցում ուղարկել իր կառավարութեանը պատերազմ վարելու այդ եղանակների նկատմամբ, որոնք հակառակ են Հաագայում Գերմանիայի ստորագրած պարտաւորութեան։ Բացի դրանից, մասնաժողովը վճռել է խնդրել ամերիկեան կառավարութեան, որպէս զի նա, պահպանելով չէզոքութիւնը, միևնոյն ժամանակ բողոքէ գերմանական կառավարութեանը այդօրինակ գործելակերպի դէմ։

ԼՕՆԴՈՆ.—Բելգիական յատուկ պատուիրակութիւն, բաղկացած 4 մինիստրից, որ դիմում է Վաշինգտոն՝ բողոքելու գերմանական գազանութիւնների դէմ, եկաւ և ընդունվեց Թագաւորից, որը յայտնեց, թէ կաջակցէ Բելգիային, թշնամուն քաջաբի դիմադրութիւն ցոյց տալու համար։

Բրիտանական նոր զօրահաւաքը ընթանում է չափազանց աջողակ։

ՎԵՆՍԿԱ.—Նահանգապետը բելգիացիների արի դիմադրութեան առիթով պահեստիների ընտանիքներին օգնող ընկերութեան անունից շնորհաւորական հեռագիր էր ուղարկել բելգիական թագաւորին, որից և ստացվեց հետևեալ պատասխանը. «Շնորհակալ եմ ամբողջ սրտից Վենսկայի նահանգապետին, նաև այն բոլոր անձանց, որոնց զգացմունքների արտայայտիչը հանդիսացաւ նա իր բուռն ողջոյնի մէջ, որից այնպէս զգացվեցինք մենք ամենքս։ Ալբերտ»։

ՏՈԿԻՕ.—Պիշոնը «Petit Journal»-ում բերթում այն կարծիքն է յայտնում, թէ եապոնական զորքերը կարող են փոխադրվել Եւրոպա՝ գերմանացիների դէմ կռուելու համար։ Այդ միտքը համակրանք է գտնում տեղիս զինուորական շրջաններում։

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Տրիպոլիում իտալական իշխանութիւնները ձերբակալել են գերմանական հիւպատոսին հակաիտալական պրոպագանդայի համար։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—«Դեյլի Տելեգրաֆիֆ» տեղիս հրատարակութիւնը հաղորդում է, որ Նիւ-Եօրկում ստացվել են ծածկագիր հեռագիրներ, որոնք վկայում են թէ՝ Գերմանիային պատերազմի հասցրած վնասը անհաշիւ է։ Գերմանիայի առևտրական յարաբերութիւնները բոլորովին խախտվել են։ Գերմանիան արագութեամբ կորցնում է իր հարուստ հանքերը, որոնք իրար ետևից անցնում են անգլիացիներին։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Կարլսբադից եկած պատօրը յայտնեց Պ. Հ. Գ. թղթակցին, որ Բիշկով աւագ-քահանան Կարլսբադում կալանաւորվեց այն պատճառով, որ մաղթանք կատարեց ռուսաց զօրքին յաղթութիւն պարգևելու համար։

ՍԻՄԼԱ. — Աւղանական էմիրը յայտնեց Հնդկաստանի փոխարքային, որ մտադիր է հետևել Անգլիայի խորհուրդներին և լիակատար չէզոքութիւն պահպանել եւրոպական ճգնաժամում, որից Աւղանիստանի շահերը չեն տուժում, իսկ նրա սահմանները միանգամայն պաշտպանված են։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 օգոստոսի

ՈՒՐՄԻԱ.—Պարսկաստանին մերձ գտնվող շրջանում Թիւրքական զօրահաւաքը ընթանում է մեծ դժուարութիւններով։ Շատ քրիստոնեաներ և քիւրդեր խուսափում են ներկայանալուց։ Թիւրքերը բոլոր պիտանի մարդկանց ժողովում են այժմ։ Վանում ընդհարում է եղել հայերի հետ։ Բիթլիսում քիւրդերի ապստամբութիւնը վերսկսվել է. այնտեղ են ուղարկված զօրքեր պարսկական սահմանագլխից։ Պահվում են գլխաւորապէս սահմանապահ վաշտերը և ռեդիֆների զօրամասերը, իսկ նիզամները ուղարկվում են ռուսական սահմանի կողմը։ Պարսկական սահմանում մնացածների լաւ զէնքը փոխում են հին տեսակի զէնքով։ Պարսկաստանի սահմանագլխում Թիւրքիայից երևացել են շատ ֆիդայիներ, մէկն այսօր կախաղան հանվեց Ուրմիայում։

Կ. ՊՕԼԻՍ.—Բուխարէստից եկաւ Բոլգարիայի վրայով Թալէաթ-բէյը և այցելեց մեծ վէզիրին և Էնվէր-փաշային։

(Հրագիրներից)

◆ Զմիւռնիայի ամերիկեան հիւպատոսը պահանջել է ռազմանաւ՝ քրիստոնեաների պաշտպանութեան համար։

◆ Բուխարէստից տեղացնում են, որ Թալէաթ-բէյը պայմանագիր է կապել «Զվեզդա» ջրաղացի հետ՝ 100 վագոն ալիւր հասցնելու Թիւրքաց զօրքերի համար։ Ալիւրի գինը սկզբից է վճարված։

◆ Դիւանագիտական շրջաններից հաղորդում են, որ Թիւրքիայի հետ բարդութիւններ ծագելու դէպքում երրեակ համաձայնութեան պետութիւններից մէկը—հաւանօրէն Ֆրանսիան—իր կապերը խզելուց կը խուսափէ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ պաշտպանել Թիւրքիայում մնացած ռուսահպատակների, անգլիահպատակների և ֆրանսիահպատակների շահերը։

◆ Օդեսայից հեռագրում են «Բ. Ռ.»-ին, որ «Գոբէն» և «Բրէսլաու» ռազմանաւերը վերանորոգվել և պատրաստ են կռուելու։ Եգէյական ծովում Դարդանէլի մուտքը պաշտպանող անգլիական նաւատորմը վճռել է թնդանօթաձգութեամբ ջրասոյզ անել գերմանական յածանաւերին՝ Եգէյական ծովը մտնելու առաջին իսկ փորձին։

◆ «Рус. Сл.»-ին Պետրոգրադից յայտնում են. «Թիւրքիայի դիրքը մնում է սաստիկ կասկածելի և անորոշ։ Այն հանգամանքները, որ հաստատում է Պետրոգրադից թիւրքաց դեսպան Ֆարրէդդին-բէյը, միանգամայն ներհակ են այն ռազմական ընդարձակ պատրաստութիւններին, որոնք ներկայումս կատարվում են ամբողջ Թիւրքիայում։ Վերջին տեղեկութիւնները Կ. Պոլսից ցոյց են տալիս, որ Բուխարէստում և Սոֆիայում Թալէաթ-բէյի ունեցած անաջողութիւնները բնաւ խելացի չը դարձրին Բ. Դրան։ Ամենից հետաքրքրականն այն է, որ Թիւրքիան պատրաստվում է պատերազմի, վերջնականապէս դեռ չը վճռելով թէ՝ ում դէմ է նա կռուելու։

«Թիւրք պետական գործիչների մեծ մասը գիտակցում է, որ Ռուսաստանի դէմ պատերազմը խելաւութիւն կը լինի, բայց որովհետև նրանք անկօր են մեղմելու ռազմական տենդէնցները, ուստի նրանք աշխատում են, յա ենայն դէպս, Թիւրքիային հանել ընդդէմ Ցունաստանի, որ անհամեմատ այնքան էլ վտանգաւոր չէ օսմանեան պետութեան համար։

«Ցունաստանի դէմ պատերազմելուն կողմնակից կուսակցութիւնից բացի, կայ կրկին այլ կուսակցութիւն, որ խորհուրդ է տալիս վրէժ լուծել Բոլգարիայից նրա համար, որ նա այժմ մերժեց միասին գործելու Ռումինիայի և Թիւրքիայի հետ ընդդէմ Ռուսաստանի։

«Հեղինակաւոր շրջաններում կարծում են, որ ամենայն հաւանականութեամբ Թիւրքիան հանդէս կը գայ Ցունաստանի դէմ, որով և բալկանեան նոր պատերազմը կը սկսվի նրանից, որ Բ. Դուռը կը պահանջէ Բոլգարիայից թոյլ տալ անցնելու Թիւրք զօրքերին բոլգարական երկրով։ Սոֆիայից մերժում ստանալու դէպքում, Թիւրքիան ամենայն հաւանականութեամբ կը սկսէ պատերազմական գործողութիւններ Բոլգարիայի դէմ։

«Ի հարկէ այս ենթադրութիւնը գուցէ չիրականանայ և առաջ գան նոր անակնկալներ։ Ցամենայն դէպս պէտք է ի նկատի ունենալ, ինչ տեսակի էլ արկածախնդրութիւն որ սկսէ Թիւրքիան, նա մնալու է միայնակ։ Արկածախնդրութեան ընոյթից է կախված այն լուրջ խնդիրը, թէ Թիւրքիայի դէմ կարող են հանդէս գալ բալկանեան բոլոր պետութիւնները միասին»։

◆ Թիւրք-յունական պատերազմի դէպքում երրեակ համաձայնութեան պետութիւնները պաշտպանելու են Ցունաստանին։

◆ Ցոյն-թիւրքական պատերազմում Ռումինիան չէզոք է մնալու։

◆ Ռուսաստանից շարունակում են Թիւրքիա մեկնել թիւրքահպատակները։

◆ Ինչպէս հաղորդում են, անգլիական կառավարութիւնը յայտնել է Բ. Դրան, որ եթէ դարձեալ գրաւվեն օտարերկրեայ շոգենաւերի ապրանքները թիւրքերի կողմից Դարդանէլով անցնելու ժամանակ, անգլիական նաւատորմը կը բռնէ թիւրքաց առևտրանաւերը Եգէյական ծովում։

◆ Թիւրքիայից տեղեկացնում են, որ Կարմիր Մահիկի ընկերութիւնը զբաղված է դաշտային հիւանդանոցներ կազմակերպելով։ Էնվէր-փաշան համարվում է ապագայ ընդհանուր զօրահրամանատար։

◆ Անգլիան և Ռուսաստանը ամենակտրուկ կերպով բողոք յայտնեցին Բոլգարիայի և Ռումինիայի դէմ, որ թոյլ են տուել գերմանացի զինուորներին անցնել Թիւրքիա Իրանց երկիրների վրայով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐԱԸ

◆ Պարիզում հատարակական օգնութեան մասնաժողովը բանւորական թաղերում բաժանում է օրական մօտ 100,000 ճաշ, իւրաքանչիւրը 20 սանտիմով։ Կառավարութիւնը առաջին հերթին մասնաժողովի տրամադրութեան տակ է դրել 1½ միլիոն ֆրանկ։

◆ Անգլիան նորից 60,000 զինուոր ափ հանեց Կալէում։

◆ Բելգիայից Անգլիա են տարվել 8000 գերմանացի գերի։

◆ Աւստրիական լրագիրները հաղորդում են, որ Վիէննայի մօտերը Դունայի ափին կառուցվում են բերդեր։

◆ Ռուսաց գործող զօրաբանակից Լէվ Լվովիչ Տոլստոյը հեռագրում է «Н. В.»-ին, որ զգացվում է բժիշկների, գթութեան քոյրերի, վիրակապերի և սպիտակեղէնի պակասութիւն։

◆ Պարիզի զօրքի հրամանատար և զինուորական նահանգապետ է նշանակվել գեներալ Գալէնին, որի ձեռքի տակ ծառայելու է, համաձայն իր խնդրի, գեներալ Միշելը։

◆ Մի վէրսիան յայտնում է, որ եապոնիայի և Անգլիայի համաձայնութեամբ, եապոնական նաւատորմը գործելու է բացառապէս Ասիայի ափերում, միւս վէրսիան պնդում է, թէ Եապոնիան իր նաւատորմը ուղարկելու է Ադրիատիկ ծովը։

◆ Թաւրիզից «Н. В.»-ին հեռագրում են, որ մի խմբակ է հաստատվել հայ և ռուս կանանցից՝ վիրաւորների համար սպիտակեղէն պատրաստելու։

◆ Բոլգարիան մեծ թիւով զօրքեր է կենտրոնացրել յոյն-սերբական սահմանագլխում։

◆ «Б. В.»-ին հեռագրում են, որ ներկայումս բելգիական-Լոթարինգիայի զօրաճակատում տեղի է ունենում տաք կռիւ։

◆ Գործող զօրաբանակից հեռագրում են, որ ռուսական վերջին մեծ պարտութեան տպաւորութիւնը աստիճանաբար չքանում է։ Ռուսաց պահեստի զօրագնդերը ոգևորված դիմում են հակայարձակումների բաւականին աջող։

◆ Բրիւսսէլի քաղաքապետը յայտնեց գերմանական իշխանութիւններին, որ քաղաքն անկարող է հատուցանել նրա վրա դրված տուգանքը։ Գերմանացիք իբրև ապահովութիւն պատանդ վերցրին յայտնի սեղանաւորներ՝ Բօաչիլդին, Սոլվէին և մի ուրիշը։

◆ Բրիւսսէլի թանգարանից լաւագոյն նկարները գերմանացիք ուղարկում են Բերլին։

◆ Հաղորդում են, որ բոլգարական կառավարութիւնը գեներալ Բաղկո Դմիտրիէվին յայտարարել է փախստական զինուորական։

◆ Բոլգար օֆիցէրները սպառնացել են, որ եթէ Բոլգարիան երթ Ռուսաստանի դէմ, նրանք խլոյն կանցնեն Ռուսաստանի կողմը։

◆ Ինչպէս հաղորդում են, Հէլգոլանդի ծովային կռուում սպանվել է գերմանական նաւատորմի պետը։

◆ Ռումինիան իր զօրքերը կենտրոնացնում է ռուսական սահմանից 45 վերստ հեռաւորութեան վրա։

◆ Պետրոգրադում խօսում են, որ Ամերիկան հրաժարվելու է գերմանահպատակներին պաշտպանելու պարտաւորութիւնից։

◆ Սալոնիկի լրագիրների ասելով, Վիլհելմ կայսրը վերջին օրերս սպիտակել է։ Նրա առողջութիւնը վատացել է։ Բժիշկներն արգելում են նրան մասնակցել ռազմի գործողութիւնները ղեկավարելու գործին։

◆ Միլիէնի մօտ տեղի ունեցած կռուում զօրքերի առաջին շարքերում կռուում էր բելգիական թագաւոր Ալբերտը։

◆ Իտալիան գեներալ-շտաբին հրամայված է լինել միանգամայն պատրաստ։

◆ Բերլինի սոցիալիստական «Vorwärts» լրագրում երևաց մի յօդուած, որի մէջ այն միտքն է արծարծված, թէ Գերմանիան պէտք է հաշտվի Ֆրանսիայի հետ և ուղղէ իր բոլոր այժերը Ռուսաստանի դէմ։ Այդ յօդուածից հետևցնում են այն, որ գերմանական կառավարութիւնը կամենում է հող պատրաստել Ֆրանսիայի հետ հաշտութեան մասին բանակցելու համար։

◆ Պետրոգրադ եկած մի կոմսուհի պատմում է, որ Վիլհելմ կայսրը գերմանացի զինուորների գործադրած գազանութիւնների ապաւորութեան տակ հրամայել է գնդակահարել խստութիւններ գործադրողներին։

◆ Գերմանացիք Նամիւրի վրա դրին պատերազմական տուգանք 180 միլիոն ֆրանկ։

◆ Գերմանական լրագիրներում տպված է, թէ Վիլհելմը Ֆրանսիայից պահանջելու է պատերազմական տուգանք 40 միլիարդ և յետաձգելու է այդ գումարի գանձումը 10 տարով, որի ընթացքում գերմանացիք դրաւելու են Ֆրանսիան։

◆ Գերմանական աղբիւրների համաձայն, Պարիզը պէտք է վերցնել սեպտ. 2-ին։

◆ Հաղորդում են, որ Ամերիկայում սկսվել է բոյկոտ գերմանական ապրանքների դէմ։

◆ Վիլհէլմը նորից նամակ գրեց իտալական թագաւորին, պահանջելով միանալ երրեակ զինակցութեանը։

◆ Պարիզ է տարված Վիլհէլմի հօրեղբօր որդին՝ կոմս Շվէրինը, որին շղթայել են, որովհետև սպառնացել է փախչել։

◆ Վիլհէլմ կայսրն առանձին հրամանով թոյլատրել է գերմանական զօրքերին կարդալ սոցիալիստական հրատարակութիւններ, այն ատելաց վերջինները դարձել են հայրենասէր։

◆ Բիսմարկի անուան ֆոնդից վերցված է մի միլիոն մարկ՝ պատերազմի ծախքերի համար։

◆ Լուվէնում գերմանացիք թնդանօթների բերանները կապել են քաղաքի խորհրդի անդամներին և այնպէս կրակել։ Նրանք կողոպտել են, տպանել են կանանց, երեխաներին և ծերունիներին։ Տաճարը և գրադարանը իր 70,000 հատոր գրքերով այրել են։

◆ Բրիւսսէլում գերմանացիք բնակվում են եկեղեցիներում։

ԱՒՍՏՐԻԱՑԻՆԵՐԻ ԳԱԶԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Աւստրիացիները կարճ ժամանակ մնալով սերբական հողում այնպիսի գազանութիւններ են արել, որոնք դեռևս յայտնի չեն քաղաքակիրթ ժողովուրդների պատմութեանը։ Երբ մարդ մտածում է այն մասին, թէ ինչեր են արել շվաբ-մաջարները, մարդու մազերը ցցվում են և սիրտը լցվում է արիւնով։

Ահա փաստեր, որոնք աւելի պերճախօս են ամեն տեսակ խօսքերից ու օրակումներից։

Սերբական գիւղերի մեծ մասը, որոնք իրանց պտղաւէտութեամբ յիշեցնում են Ֆրանսիական Բրետանը, հրդեհվել են աւստրիացիների կողմից։ Կիսով չափ հրդեհված և ամբողջովին կողոպտված է Շաբաց քաղաքը։ Նրա բնակիչների ահագին մասը, գլխաւորապէս կանայք և երեխաներ սպանված և խողխողված են։ Մեր թշնամու «սպասեալական զէրքը» պատերազմական միանգամայն նոր ձևեր է բանեցնում։ Քաղաքը գրաւելով, աւստրիացիները հաւաքում են նրանում եղած կանանց ու երեխաներին և կանգնեցնում իրանց վաշտերի և սերբական պաշտպանողական զօրքերի արանքում։ Ամեն մի համազարկի ժամանակ նրանք հրամայում էին այդ խեղճերին՝ «պաակիր» և յետոյ՝ «վանգնիր»։ Այդ խեղճերի պատմութիւնները սարսափ են ըներում մարդու վրա։ Շատ յղի կանայք հէնց այդտեղ էլ ծնել են անժամանակ, սակայն այդ ոչ մի ազդեցութիւն չէ արել ժամանակակից հոների վրա։

Լիպօլիստ գիւղում, մաջարական (աւստրական) մի ֆելդֆեբել բռնում է մի գեղեցիկ աղջկայ, Միլիցա անունով, և չորս գիշեր վայրենի կերպով բռնաբարում է նրան։ Իսկ այն ժամանակ, երբ սերբական հնծելազունդը մօտենում է Լիպօլիային, այդ վայրենի ֆելդֆեբելը սրախողխող է անում աղջկան։

Դոբրիչ գիւղում, Շաբացի մօտ, գտնվել են մի շարքում կախված 9 ծերունու։ Նրանց կիսաբայբայված դիակները վերցնում են սերբական զինուորները։

Մենով գիւղում, որը Շաբացից ընկած է 10 կիլոմէտր հեռաւորութեան վրա, «Բիրդ. Բեդ.»-ի թղթակիցը օգոստոսի 5-ին անձամբ տեսել է երկու սերբ ծերունու, որոնց աչքերը հանել էին աւստրիացիները։ Նրանցից մէկը ընկած է եղել իր տան առջև, իսկ միւսը մի քիչ հեռու։ Սպանված ծերունիներից մէկի կինը ծնկներին տալով լալիս էր և աղաչում յայտնել իրան, թէ հեռացվե՞լ են արդեօք թշնամիները, և խընդրում էր զինուորներ ուղարկել ծերունիներին թաղելու։

Աւստրիական զունդը մոլիգին թափով անցաւ Բոգովաչ գիւղի միջով և ոտնատակ տուեց վախեցած կանանց ու երեխաների խմբերը, որի հետևանքն այն եղաւ, որ 15 երեխայ մեռան տեղն ու տեղը։

Նոյն այդ գիւղում աւստրիացիները գընդակահարեցին մի ծերունու, և այն ժամանակ, երբ ծերունին հոգեվարքն էր ապրում, կրծքին խարոյկ վառեցին։ Այդտեղ սպանել են և շատ անզէն գիւղացիների։

Գօրնիա-Վրանսկա գիւղում յօշոտված և սպանված են 30 պատանիներ. շատերի աչքերը հանել են։

Օգոստոսի 8-ին գրաւելով Լէշնից քաղաքը, մեր զօրքերը գտան մանուկների քայքայված դիակների մի ահագին կոյտ և 10 կախված պատանիներ։ Այդ նոյն օրը Կրիվայից գիւղի ճաշարանի մօտ գտնվեցին 19 դիակ՝ երեքը ծերունու, 6 կանացի և 10 երեխաների։ Նրանք բոլորը թոկով կապված էին միասին և խողխողված այնպէս, ինչպէս ոչխարներին են խողխողում։

Ցավլակ գիւղում սպանված և այլանդակված են 15 կին ու երեխայ։ Հէնց այդ գիւղում կարել են մի կնոջ ծծերը, իսկ մի ուրիշի էլ թիկունքի մորթիից վերցրել են մի քանի շերտ։

Լեպշիցի մօտ եղած մի գիւղում երկու աղջկայ, որոնք քահանայի դուստրներ էին, բռնաբարել է աւստրիական հեծելազունդի մի ամբողջ վաշտ և յետոյ գնդակահարել։

Բայց այս դեռ բոլորը չէ։ Գիւղ չը կայ, որ մաջարները գազանային բռնութիւն գործադրած չը լինեն անմեղ աղջիկների վրա։

Օգոստոսի 6-ին Գրուիչ գիւղում կէս օրից յետոյ նկատվեց հետևեալ տեսարանը։

Ցերի ստորոտում ընկած էր աւստրիական մի զինուոր. նրան վերցրել էին սերբերը։ Նա տանջանքից և ծարաւից իրար կպչող շրթունքներով ինչ-որ ասում էր։ Նրա մօտ կանգնել էր հասակաւոր մի սերբ գեղջկուհի, մի բաժակ կաթ ձեռին, և լալիս էր մեղմիւ։ Այն հարցին, թէ ինչու է լալիս նա, կինը պատասխանեց.

— Ինչպէս լաց չը լինեմ էս խեղճի վրա. չէ՞ որ նա՝ խեղճը օտար տեղ է ընկել ու մեր լեզուն էլ չը գիտէ... մի գուցէ սա մի խօսք ասէր, բայց ո՞վ կը հասկանայ նրան։ Ի՞նչպէս լաց չը լինեմ այս խեղճի վրա, չէ՞ որ սա ոչ մի բանում մեղաւոր չէ ու իր կամքով չէ եկել այստեղ։ չէ՞ որ սա էլ մի մօր որդի է, խեղճ ու կրակ...

Ասում էր սերբուհին ու լալիս շարունակ։

Այդպէս են արդեօք մաջարներին ծնող և կրթող մայրերը, այն մաջարների, որոնք սերբական գիւղերում ամեն տեսակ գազանութիւններ են գործադրել կանանց և երեխաների վրա։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԴԷՊ

Վերջին 40 տարին ողջ Եւրոպան, կարելի է ասել՝ ողջ քաղաքակիրթ աշխարհը, ապրում էր Եւրոպական խոշոր պատերազմի սպառնալիքի տակ։ Այդ 40 տարվայ ընթացքում տնտեսական յարաբերութիւնները ամբողջ Եւրոպայում խիստ փոխվեցին. դրա հետ միաժամանակ խիստ փոխվեցին նոյնպէս և պատերազմ վարելու տնտեսական պայմանները։ Այնպիսի երկիրների համար, որոնք մտել են ինդուստրիալ պետութիւնների շարքը, որոնք ապրում են օտարի հում նիւթերի և ուտեստի մթերքների ներմուծումով և գործարանային ապրանքներ ու կապիտալներ արտահանելով, այժմ ահեղ ուրուականի պէս հարց է բարձրանում այն մասին, թէ այդ պետութիւնները պատերազմի ժամանակ ի՞նչպէս պէտք է կերակրեն իրանց ազգաբնակութեան և ի՞նչպէս պէտք է իրանց գործարանների արդիւնաբերութեան համար անհրաժեշտ հում նիւթեր ձեռք բերեն։ Այս հարցը առանձ-

նապէս խիստ յուզեց Գերմանիային, որը իր աշխարհագրական դիրքով գտնվում է Եւրոպայի կենտրոնում և, քաղաքական կոմբինացիաների հետեանքով, հեշտութեամբ կարող է կտրված մնալ շուկաներից, որտեղ նա գնում է հում նիւթեր և ուր նա ծախում էր իր գործարանների ապրանքները։

Թիշեալ հարցերին Գերմանիայում ընդարձակ գրականութիւն է նուիրված, որի մէջ աշխատում են պարզել Գերմանիայի ժողովրդատնտեսական պայմանները եւրոպական պատերազմի հանդէպ։ Երկար ժամանակ Գերմանիայում բուռն վէճ էր տարվում այն մասին, թէ այդ երկիրը իրանից ինքնուրոյն պետութիւն է ներկայացնում, թէ ոչ։ Կեանքը այդ հարցը վճռեց անդառնալի կերպով։ մեր ժամանակի Գերմանիան անպայման ինքնուրոյն պետութիւն է՝ դրանից բղխող պատերազմի ժամանակի բոլոր հետեանքներով։ Այնուհետև տրվեց մի ուրիշ հարց, թէ Գերմանիայի գիւղատնտեսութիւնը ներկայանում է արդեօք հիմքը գերմանական զինուորական ոյժերի։ Այս հարցը իր հերթին առաջացրեց մի ամբողջ գրականութիւն և ընդարձակ վիճաբանութիւններ։ Երկրի նշանաւոր մասնագէտները թւերը ձեռներին վճռեցին, որ գերմանական զինուորական ոյժերը, գլխաւորապէս, զինուորագրվում են արդիւնաբերական շրջաններում և որ գիւղատնտես բնակչութեան դերը երկրին զինուոր տալու գործում նշանաւոր կերպով կրճատվել է։

Այսպիսի պայմաններում Գերմանիայում անհրաժեշտութիւն առաջացաւ լուրջ կերպով զբաղվել երկու կարդինալ հարցերի լուծումով.—ինչպէս կերակրել բնակչութիւնը և անասունները պատերազմի ժամանակ և ինչպէս հոգալ արդիւնաբերութիւնը անհրաժեշտ հում նիւթերով ապահովել։

Առաջին հարցի վերաբերմամբ Գերմանիայում գոյութիւն ունի մի շարք մարդկանց միատեսակ կարծիքը, որոնք զբաղվում են այդ հարցով։ Մենք այստեղ առաջ կը բերենք Ա. Բլաուշտէյնի կարծիքը, որ հրատարակվեց այս տարի։

Բլաուշտէյն, յենվելով այդ հարցի մասին եղած և մշակված գրականութեան վրա, իր, Բերլինի ամտեսական ընկ. մէջ, Գերմանիայի պատերազմի հանդէպ ունեցած գիւղատնտեսական պատրաստութեան մասին կարդացած զեկուցման մէջ յայտնում է, որ Գերմանիան վերջին տարիները 5—6 միլիարդ մարկի զանազան տեսակի հում ապրանք է մուծել երկիրը և մօտաւորապէս 3 միլիարդի էլ ուտեստի մթերքներ ու անասուն։ Գերմանական ամբողջ ներմուծման կէսը կազմում է հում նիւթը, իսկ մթերքների և անասունների մուծումը 30%-ից աւելի։ Այդպիսով ուրեմն գերմանական ներմուծման երկու կարևոր բաները կազմում են ընդհանուր ներմուծման 85%-ը։ Դրա հետ միասին կարևոր է ի նկատի ունենալ և հետեւալ հանգամանքը. գերմանական արտաքին առևտրի 67%-ը ընկնում է ծովային առևտրին և միայն 33%-ը ցամաքային։ Այս հանգամանքը կարևոր է նրա համար, որ պատերազմը այս կամ այն թշնամու հետ առանձին ազդեցութիւն է ունենում Գերմանիայի՝ հում նիւթեր և ուտեստի ապրանքներ ստանալու վրա։

Բլաուշտէյն պնդում էր, որ պատերազմի դէպքում Գերմանիան անկարող կը լինի որևէ կերպ դադարեցնել ուտեստի մթերքների և անասունների ներմուծումը։ Նա կարծում է, որ ծովային ներմուծումը գուցէ բոլորովին կամ նշանաւոր չափով կանգ առնի անգլիական և ֆրանսիական նաւատորմի գործողութիւնների պատճառով։ Հետաքրքրական է, որ գերմանական գրականութիւնը ոչ մի անգամ իրան հարց չի տուել այն մասին, թէ ի՞նչ կը լինի Գերմանիայի ուտեստի գործի հետ, եթէ ներկայ պատերազմի նման պատերազմ բռնկի։ Հէնց մօտ օրերս պրոֆ. Դիցէլ համոզված կերպով արտայայտվեց այն մասով, որ ինքը անհաւանական է համարում, որ թշնամու նաւատորմը կատարելապէս դադարեցնի հացի ներմուծումը Գերմանիա «Եթէ միաժամանակ պատերազմ լինի Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ, և նրանց նաւատորմիրը շրջապատեն մեր նաւահանգիստները, այն ժամանակ մենք,—պնդում էր Դիցէլ—հաց կարող ենք ստանալ Ռէյնի, Էլբայի՝ Դունայի վրա Բոտտերդամի, Անտվերպենի, Գենուայի և Տրիէստի վրայով։ Պրոֆ. Բիսէր դժուարութիւնները հնարաւոր էր համարում միայն այն դէպքում, եթէ հացի ներմուծումը Գերմանիա դադարեցվի հետեւեալ պետութիւնների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Աւստրիայի հետ, Իտալիայի, Շվէյցարիայի, Հոլանդիայի և Բէլգիայի կողմից։ Այդօրինակ կոմբինացիան սակայն Բիսերին անհնար էր թուում։ Բայց ներկայ պատերազմը բոլորովին հեռու չէ այդ տեսակ կոմբինացիայից։ Շվէյցարիան, որտեղ հացի պաշարը սովորաբար շաբաթվայ պահանջից չի բարձրանում, չը պէտք է հաշուի մէջ մտցնել։ Բելգիան կուում է Գերմանիայի հետ, Հոլանդիան և Իտալիան խիստ չէզոքութիւն են պահում, մնում է միայն Աւստրիան, որը երբէք Գերմանիային հաց մատակարարելու գործի մէջ ոչ մի դեր չի խաղացել։ Գերմանիան, խաղաղ ժամանակ, Ցրելիխի հաշուով, իւրաքանչիւր տարի երկու-երեք ամիս ներմուծված հաց է ուտում։ Առաւել վատ է անասունների կերի գրութիւնը, որովհետև տաւարի կերի 40%-ը և ձիերի կերի 60%-ը ապահովվում է օտար երկիրներից մուծվող կերով։ Անասնապահութիւնը պատերազմի ժամանակ անխուսափելիօրէն առաջացնելու է շաքարի և օղու արդիւնաբերութեան կրճատում, որովհետև այն հում նիւթերը, որ պահանջվում է շաքարի և օղու համար, պէտք է գործադրվի անասունների կերի տեղ։

Ընդունելով դրութեան ծանրութիւնը և բնակչութեան ու անասունների ուտելիքի վերաբերմամբ եղած սուր հարցը, Գերմանիայում հաստատապէս յոյս էին դնում այն բանի վրա, որ Անգլիան կը յարգի հոլանդական և բէլգիական նաւահանգիստների չէզոքութիւնը, որը և Գերմանիային կօգնի ամերիկական հաց ստանալ։ Բայց իրականութիւնը դառնապէս ծիծաղեց այդ յոյսերի վրա։ «Մենք պէտք է ուրախանանք,—ասում էր այս տարի Բլաուշտէյն,—որ մեր տրամադրութեան տակ կան չէզոք նաւահանգիստներ։ Հէնց այդ բանը՝ չէզոք նաւահանգիստներով հաց ստանալու յոյսը վրդովում էր այն հարցը, թէ ինչպէս ապահովել Գերմանիայի բնակչութեան ուտելիքը պատերազմի ժամանակ։

Բայց և այնպէս Գերմանիայում մի անհանգիստ միտք ծագեց այն մասին, որ չէզոք նաւահանգիստները կարող են իրանց վրա դրված յոյսերը չարդարացնել։ Բացի այդ, պարզ էր, որ ճանապարհների պայմանները և հաղորդակցութեան միջոցները պատերազմի ժամանակ այնպէս կը լինեն, որ ներմուծված և սեփական հացը երկրի մէջ նորմալ կերպով բաժանելու մասին խօսք անգամ չէ կարող լինել։ Արդիւնաբերութեան եռուն ժամանակ Գերմանիայում ապրանքատար վագոնների պակասութիւնը սովորական երևոյթ էր ներկայացնում։ Իսկ ինչ պէտք է լինի այժմ, պատերազմի ժամանակ, երբ պատերազմական նպատակները ստիպում են բոլոր ճանապարհները և միջոցները ծառայեցնել միայն զօրքին։ Բացի այդ, ապրարային օրէնսդրութիւնը Գերմանիայում որոշ չափով թուլացրել է հացի առևտուրը, որը առաւել վատացնում է ազգաբնակութեանը ուտելիք հասցնելու պայմանները պատերազմի ժամանակ։ Գերմանիայում ակնդէտ հետևում էին այն բանին, թէ ինչ է կատարվում Ռումինիայում 1913 թ. յուլիսին, երբ այդ երկրում զօրահաւաք էր կատարվում։ Ռումինիայի փորձը ցոյց տուեց, որ զօրահաւաքի ժամանակ չափազանց դժուար է հացը երկրի մէջ բաժանելու գործով զբաղվել։ «Ոչ վագոն, ոչ աւտոմօբիլ, ոչ հեռախօս, ոչ հեռագիր, ոչ պօստային նամակ, ոչ ապրանքատարների երթևեկութիւն և դրա հետ միասին երկաթուղիների վարչութիւնը ոչինչ չը գիտէր այն ապրանքների մասին, որոնք գտնվում էին ճանապարհին։ Այսպէս անցաւ զօրահաւաքը Ռումինիայում, և այդ սարսափելի կերպով վախեցրեց Գերմանիային։ Այդ պատճառով Գերմանիայում սկսեցին քարոզել այն միտքը, որպէսզի մինչև պատերազմը երկրում հացի անհրաժեշտ պաշար հաւաքեն, ամբարներ կառուցեն և նրանցում երկու միլիոն տոն ցորեն տեղաւորեն։ Այդ պաշարները ճանաչվում էին ծայրայեղ անհրաժեշտութիւն։

Բայց, ինչպէս յայտնի է, այդպիսի պաշարներ Գերմանիան չը կարողացաւ հաւաքել, և պատերազմը, որը Գերմանիան հարկադրված է վարել գրեթէ ողջ Եւրոպայի հետ, նրան մերկ յոյսերով գտաւ Բէլգիայի և Հոլանդիայի չէզոք նաւահանգիստներում։ Այժմ արդէն յայտնի է, որ փոքրիկ Բէլգիան, որին Գերմանիան համարում էր իր աւանպօստը, հանդիսացաւ հերոսական թշնամի։ Գերմանիայի՝ Անգլիայի չէզոքութեան վրա ունեցած յոյսերը խորտակվեցին, Գերմանիայի ծովային առևտուրը, որ կազմում է 70%-ը արտաքին առևտրի, վերջացաւ։ Գերմանիայում ազգաբնակութեանը պատերազմի ժամանակ ուտելիք հասցնելու հարցը դարձել է ահեղ պրոբլէմ։ Այդ պրոբլէմի լուծումը այժմ կախված է ոչ թէ Գերմանիայից, այլ նրա թշնամի այն ոյժերից, որոնք տիրում են ծովի վրա։ Գերմանական բանկիրների երկրորդ համագումարում բանկիր Վարբուրգ յայտնեց, որ Գերմանիան ֆինանսական տեսակէտից վատ է պատրաստված պատերազմի հանդէպ։ Բայց կարծվում է, որ անտեսական տեսակէտից Գերմանիան առաւել խոցոտ տեղեր ունի, որովհետև պատերազմի համար հարկաւոր է ոչ միայն դրամ, այլ և հաց։

(«Торг. Пром. Газета»)

ԴԻՊԼՈՄԱՏԻԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բոլգարական քաղաքական շրջաններից հաղորդում են, որ բոլգարական կառավարութիւնը մի աւելորդ անգամ հաստատեց, որ ինքը վճռել է ներկայ բարդութիւնների ժամանակ չէզոք մնալ։ Ասում են, որ այդ առիթով բանակցութիւններ են տեղի ունեցել մինիստր-նախագահ Բադոսլավովի և մեր դեսպանի միջև, նոյնպէս և Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների միջև։ Վերջինները ցանկացել են իսկապէս իրազեկ լինել Բոլգարիայի մտադրութեանը։ Դեսպանների այս հանդէս գալը ակնյայտ կերպով հարկ եղած ազդեցութիւնն է արել, և Բադոսլավովը փոխել է իր քաղաքական կուրսը, ընդառաջ գնալով այն ցանկութեան, որը լիակատար և որոշ ձևով երևում է բոլգարական ժողովրդի և զօրքի մէջ։ Հաղորդում են, որ բոլգարական շատ ազդեցիկ շրջաններում խորհրդակցութիւններ են տեղի ունեցել, որոնց ժամանակ քննվել են Սոֆիայի կառավարիչ շրջանների վերաբերմունքը դէպի Ռուսաստանը, և այն անձինք, որոնք հակառուսական աշխատանք են վարում, խիստ դատապարտութեան են ենթարկվել։ Այս տեսակ են Պետրոգրադում ստացված պաշտօնական տեղեկութիւնները։ Միաժամանակ, սակայն, հաստատ տեղեկութիւններ կան, որ Սոֆիայով և Ֆիլիպպեպոլով անցել են 150 գերմանական օֆիցէրներ, որոնց մէջ եղել են մի քանի նաւաստիներ, նոյնպէս և զինուորներ։ Գերմանացիները Բոլգարիա են մտել ճեպընթաց գնացքով, և նրանց բոլորին ուղարկել են Կ. Պոլիս։ Այդ առիթով տեղեկութիւն հարցվեց բոլգարական պաշտօնական անձերից, որոնք վճռականապէս հերքեցին այդ տեղեկութիւնը, համարելով որ այդ մտացածին բան է և բղխում է այն շրջանի աղբիւրից, որը դէմ է Բոլգարիայում ներկայումս նկատվող հաշտեցուցիչ քաղաքականութեան։ Շատ հաւանական է, որ այստեղի բոլգարները իրազեկ չեն այդ բանին, որովհետև գերմանական զինուորականների Բոլգարիայով անցնելու մասին մենք տեղեկութիւններ ենք ստացել տարբեր աղբիւրներից։

Այսօր գիւանագիտական շրջաններում առաւել հանգստացուցիչ տեղեկութիւններ են ստացվել Թիւրքիայի ծրագիրների մասին։ Բանը նրանումն է, որ Թիւրք ազդեցիկ մինիստրների միջև երկու հոսանք է նկատվում,—ագրեսիվ քաղաքականութեան ներկայացուցիչը, ինչպէս յայտնի է արդէն, Ենվէր-փաշան է, իսկ միւս հոսանքի գլուխ է կանգնած Զէմալ-փաշան։ Պատմում են, որ այդ երկու մինիստրների միջև, մինիստրների վերջին խորհրդակցութեան ժամանակ, խիստ բուռն վիճաբանութիւն է տեղի ունեցել և յաղթութիւն տարողը երբ Զէմալ-փաշան է եղել։ Միաժամանակ, այդ տեղեկութիւնների համաձայն, տեղի է ունեցել մի անցք, որը նշանաւոր չափով ազդել է իրերի ընդհանուր դրութեան վրա. այդ այն է, որ մինիստրների խորհրդից դուրս գալու ժամանակ մի զինուոր մահափորձ է կատարում Թիւրքաց զինուորական մինիստրի վրա և Ենվէր-փաշան վիրաւորվում է։ Տեղեկութիւն է հարցվել Պետրոգրադի Թիւրքաց դեսպանատից։ Օսմանեան դեսպանատան ներկայացուցիչը յայտնել է, որ ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չը կայ այդ մահափորձի մասին։ Հետագայ քննութիւններից յետոյ պարզվեց, որ մահափորձը իսկապէս տեղի է ունեցել, այլ Կ. Պօլսում ամեն կերպ աշխատում են թաքցնել այդ և պաշտօնապէս յայտնել են, որ մինիստրը օդացաւով բռնվեց յանկարծ։ Ենվէր-փաշայի այս հիւանդութիւնը ամբողջովին փոխում է պատկերը և օսմանեան քաղաքագէտների չափաւոր կուսակցութիւնը, ըստ երևոյթին յաղթող է հանդիսանում։ Ցամենայն դէպս մեր կառավարիչ շրջաններում առաւել հանգստացուցիչ բնոյթ կրող տեղեկութիւններ կան։

Մի օտար դիպլոմատ, քննելով այն ամենը, ինչ կատարվում է Թիւրքիայում, նկատել է.

— Այսօր խօսում էին, որ Թիւրքերը յոյների դէմ կուի են պատրաստվում։ Ծովի վրա նրանք յոյներից թոյլ են, հետևապէս՝ նրանց բոլոր յոյսերը ցամաքի յաղթանակի վրա է, բայց դրա համար նրանք պէտք է Բոլգարիայի թոյլատուութիւնը խնդրեն իրանց զօրքերը Դիւմիտրլինայով Դէդէաղաջ և բոլգարական ուրիշ շրջաններ մտցնելու։ Իսկ մենք յայտնի է, որ Թալէաթ-բէյ և Խալիլ-բէյ այդ հարցը յարուցել են իրանց Սոֆիա եղած միջոցին, և բոլգարները վճռական ձևով յայտնել են, որ, ներկայ պայմաններում, նրանք չեն կարող ընդառաջել Թիւրքերին և թոյլ տալ զօրք տեղափոխել յիշեալ վայրերը։ Այս ամենը վկայում են, որ Բ. Դրան պատերազմական ներկայ պատրաստութիւնները ձեռնարկվում են միայն և միմիայն կաբինետների վրա ներգործելու, ի նկատի ունենալով կօմպենսացիաների մասին եղած բուռն բանակցութիւնները։

(«Н. В.»)

ՎԻՐԱՒՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐԻՑ

—

Վիրաւորված և հիւանդանոցում պառկած ռուս զինուորները մի շարք հետաքրքրական պատմութիւններ են անում այն մասին, թէ ինչպէս իրանք գերի ընկան գերմանացիների մօտ վիրաւորված դրութեամբ։ Այդ պատմութիւններից երևում է, որ գերմանացիները բոլորն էլ բարբարոսներ չեն։ Առաջ ենք բերում այդ պատմութիւններից մի երկուսը։

Զինուոր Միխայիլ Եաշկովիչ ահա ինչ է պատմում.

«Ես վիրաւորված ընկած էի, երբ գերմանական սանիտարները եկան և ինձ էլ իրանց վիրաւորների հետ վերցրին։

«Տարան կանանց գիմնազիան, ուր հիւանդանոցի պէս մի բան էր շինված։

«Բոլոր վիրաւորները պառկած էին յատակին, յարդի վրա։

«Պառկել եմ և մտածում եմ՝

—Գերի եմ ընկել։

«Այդտեղ եկան և գթութեան քոյրերը՝ սպիտակ շորերով և սև կիսածածկոցներով ու կարմիր խաչերով կրծքներին։

«Նրանք սկսեցին հիւանդների վէրքերը կապել, կապեցին և իմը։ Յետոյ բերին ըստ պիտակ, նեղ, դեռևս տաք հաց։

«Քոյրերից մէկը սկսեց հացը կարտել, իսկ միւսը՝ բաժանել։

«Հացի կտորը տալիս էր մէկին, վազում միւսի մօտ, դառնում էր, նորից մի կտոր աւելացնում։

«Սանիտարը բերեց տաք սուրճ։ Ես փորձեցի,—դառն էր, առանց շաքարի։ Զը խմեցի, դուր չեկաւ, սաստիկ դառն էր։

«Տեսան որ իրանց սուրճը չեմ խմում, խոզի մսից պատրաստած կերակուր բերին։

«Հէնց այդ ժամանակ մէկ էլ տեսնեմ իրարանցում ընկաւ դրանց մէջ և բոլոր սանիտարները փախան։

Դրանից յետոյ զինուոր Եաշկովիչ պատմում է, թէ ինչպէս ռուսները եկան այնտեղ։ Այնուհետև էլ ոչինչ չէ յիշում, թէ ինչպէս է եղել, որ բերվել է ռուսական հիւանդանոց։

Մի ուրիշ զինուոր՝ Վասիլի Սլադկով հետևեալն է պատմում.

«Մենք 50—60 հոգի մի տան մէջ էինք, երբ գերմանացիները շրջապատեցին մեզ։ Ես վիրաւորված էի ծնկիս։ Երբ նրանք մեզ շրջապատեցին, սկսեցին ծանր վիրաւորները թեթևներից զատել, և նրանք, ովքեր կարող էին ոտքով քայլել, բաժանեցին ու պահակախմբով տարան։

«Գերմանացիները ձեռքները շարժելով մեզ ցոյց էին տալիս Գերմանիայի կողմը։

«Գերմանացի մի քանի զինուորներ մօտեցան մեզ և սկսեցին լեհերէն խօսել։ Մեր վիրաւորների մէջ կային լեհեր։

«—Ոչինչ, ոչինչ,—ասում էին նրանք,—մեզ մօտ ձեզ համար լաւ կը լինի։

«Մերոնք նրանց հետ այնքան էլ չէին խօսում։

«Մեզ պառկեցրին մի այգում, շինէների վրա։ Յետոյ մեզ մօտ եկան գերմանական օֆիցէրներ, նայեցին մեզ, խօսեցին իրանց լեզուով, յետոյ մեզ վրա պահակ կարգեցին։

«Այդ պահակը սկսեց մեր վէրքերը կապել։ Յետոյ բակլագը հանեց, ինքը փորձեց սկզբում, երևի նրա համար, որ չը կարծենք թէ մեզ կամենում են թունաւորել։ Տուեց մեզ խմելու։ Նրա բակլագում սառը սուրճ կար։

«Այդ պահակը յետոյ գնաց տուն, բերեց մեզ համար սպիտակ հաց և մածուն։

«Մենք կերանք։

«Իսկ երբ մթնեց, և մենք պառկեցինք քնելու, պահակը գիշերը գնաց»...

Այնուհետև զինուոր Սլադկով պատմում է, թէ ինչպէս ինքը գիշերը վեր է կենում, փայտեր կտրում և կաստիլներ շինելով թագուն փախչում երկու ընկերների հետ միասին և հասնում է կազակների խմբին ու ազատվում գերութիւնից։

ՄԻ ԷՋ ՁԵԽԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

II

Ինչպէս յայտնի է, կաթոլիկ եկեղեցին 1415 թ. Յան-Հուսին, կաթոլիկ եկեղեցու կարգերի այդ եռանդուն ու համոզված քննադատին, որ ազգով չեխ էր, այրեց խարոյկի վրա որպէս հերետիկոս Բոհեմիան, որ այնքան բուռն ու անկեղծ սիրով սիրում էր իր այդ արժանաւոր զաւակին, չը կարողացաւ հաշտվել այդ իրողութեան հետ, մանաւանդ որ Յովհաննէս XIII պապի կոպիտ ու խարդախ թակարդով գլուխ եկաւ այն, և ազատութեան տենչով վառված՝ սուրը պատեանիցը հանեց պաշտպանելու համար իր քրիստոնէական և ազգային ոտնակոխ եղած ազատութիւնը ընդդէմ պապական ուզուրպատօրների և նրանց արբանեակներ գերմանացի իշխանների։ Հարցը ազգային կերպարանք ստացաւ։ Չեխերը կազմակերպեցին հուսիտեան բանակներ, և սկսվեցին հուսիտեան պատերազմները, որոնք տեւեցին 1420—1431 թ.։

Հուսը գնացել էր Կոնստանց, որպէս զի իր ազգի վրա բարդված հերետիկոսութեան ամբաստանութիւնները ջրէ. այդ իսկ պատճառով նրա բանտարկութիւնը և մահվան դատապարտելը ամբողջ չեխ ժողովրդի կողմից ընդունվեց որպէս վիրաւորանք ազգի պատուին։ 1415 թ. սեպտեմբերին Պրագա քաղաքում ժողովվեց չեխական արտակարգ սէյմ և այդտեղ յօրինվեց մի բողոքագիր Հուսի այրվելուն նկատմամբ, որին ստորագրեցին 452 իշխաններ, բարոնների և ազնուականներ Չեխիայի և Մօրավիայի զանազան կողմերից։ Նրանք դիմում էին պապին և յայտնում, որ իրանք պատրաստ են մինչև իրանց արեան վերջին կաթիլը պաշտպանել իրանց անկախութիւնը կրօնական ու քաղաքական հարցերում։ Էլ աւելի որոշ կերպով նրանք շեշտում էին այն սկզբունքը, որ իրանք պիտի հնազանդվեն պապին և եպիսկոպոսներին միայն այն դէպքում, եթէ դրանց պահանջները համաձայն լինեն Աստուծու խօսքին։ Նոյն սէյմում ներկայ եղողները ստորագրեցին նաև մի համաձայնութեան գիր, որով պարտաւորվում էին իրանց կալուածքների մէջ թոյլ տալ Աստուծու խօսքի ազատ քարոզութիւնը։

Երբ 1420 թ. հուսիտները ջարդեցին Սիգիզմունդ կայսրի զօրքին Պրագայի մօտ, կայսրը յօժարութիւն յայտնեց հուսիտների հետ բանակցութիւնների մէջ մտնել։ Հուսիտները իրանց կողմից զէնք վայր դնելու համար առաջարկեցին հետեւեալ չորս պայմանները.

1) Աստուծու խօսքի քարոզութեան ազատութիւն.

2) Հաղորդութեան ժամանակ տալ ժողովրդին թէ՛ հացը, թէ՛ գինին.

3) Դրաւումն եկեղեցու և հոգևորականութեան կալուածների.

4) Խստութեամբ կռուել ամեն տեսակ յանցանքների և մոլութիւնների դէմ, այսինքն մահացու մեղքերի դէմ, որոնց կարգին էին պատկանում—բացի քրէական յանցանքներից — անառակութիւնը, արբեցութիւնը, խաբեբայութիւնը, վաշխառութիւնը և ամեն տեսակ կեղեքումներ, մանաւանդ հոգևորականների կողմից։

Սակայն Սիգիզմունդ կայսրը չէր կարող համաձայնվել այդ պայմաններին, այլ աշխատեց զէնքի այժմեայ չեխերի մէջ ճնշել այդտեղ ծագած հերետիկոսութիւնը և վերականգնել չեխական հողերի վրա իր ժառանգական իրաւունքները։ Ահա այստեղից ծագում առան վերև յիշված հուսիտեան պատերազմները։ Կռիւը յամառ էր, երկու կողմից էլ անխնայ կոտորում էին միմեանց, ամբողջ երկիրը դարձել էր մի մեծ պատերազմական դաշտ, գիւղեր և քաղաքներ աւերվում և քանդվում էին. սակայն չեխ ժողովուրդը մնաց անդրդուելի։

Ազատութիւն սիրող չեխերը կռուել և կռուում են բռնութիւն գործադրող գերմանացիների դէմ։ Հուսիտներ են նրանք։

Մ. Դերձակեան

ԲԷԼԳԻԱ

(Երկրի առևտրա-արդիւնաբերական և մասնաւորապէս կենցաղական կեանքը)

VI

Դեղեցիկ գրականութիւնը և գեղարուեստը

Մի ազգի կուլտուրական առաջընթացութեան աստիճանաչափն է նրա մասնաւոր, հոգեկան կեանքը, որը տնտեսական հզօր ոյժի հետ զուգընթացաբար զարգանում է ու առաջադիմում։ Մեր նախորդ տեսութիւնների մէջ, որքան կը ներէին լրագրական էջերը, աշխատեցինք ընթերցողների առաջ պատկերացնել Բէլգիան իր բազմազան կողմերով։ Մնում է մեզ այժմ մի ամփոփ տեղեկութիւն տալ նրա գեղեցիկ գրականութեան և գեղարուեստի մասին։ Բանն այն է, որ մինչև անցեալ դարի վերջերը փոքրիկ Բէլգիան իր գրական լեզուով միացած լինելով հարևան Ֆրանսիային, չէր կարողանում դեռ ևս առանձին բէլգիական ազգային գրականութիւն ստեղծել։ Այս իսկ պատճառով Բէլգիայի գրողները ընդհանուր արևմտեան գրականութեան մէջ միախառն էին ճանաչվում ֆրանսիական գրողների հետ։ Նրանց նոյնիսկ բաւական յայտնի բանաստեղծները, վիպասաններն ու դրամատուրգները յայտնի էին լինում միայն իրանց հայրենիքում, անձնական յարգանքով ու համակրութեամբ։ Վէպերի և պատմուածքների մէջ յիշվում են բարոն Սեն Ժենուա, Ա. Մօրաժ, տիկին Ժոլի, Շ. դը-Կոստէր, Էմ. Գրէյզոն, Էմ. Լեկլերկ, Էդ. Պիկար և մանաւանդ Ռիւ-Էլենս (կեղծ անունը Կար. Գրավիէր)։ Դրամատուրգներից աւելի յայտնի են՝ Պր. Նոյէ, Ֆ. Ժոլի, Կ. Մատերն, Է. Վակեն։ Բանաստեղծներ՝ Վեստենրաատ, Դիւբուա, Անդրէ, Ջան Գաբելէ, Ա. Մատիէ և ուրիշներ։

Ֆլամանդները, որ բէլգիական ժողովրդի կէսից աւելի են և խառնուածքով ու բնաւորութեամբ տարբեր մարդիկ են, ունեն իրանց նախնի լեզուն և գրականութիւնը։ Վերջին դարում էլ դեռ ևս կան յատուկ ֆլաման գրողներ ու հեղինակներ, որոնցից աւելի յայտնի են Իոհան Վիլլեմս, Ֆ. Բլոմմարտ, Կոնսիեանս, Եան և Աւգ. Մանդերս։ Բայց Բէլգիան, ինչպէս ասացինք, այս և մեր վերև յիշած անուններով ընդհանուր ազգերի գրականութեան մէջ դեռ չէր տուել իր մեծ դէմքերը։ Ահա այդպիսիները ծնվեցին մեր ժամանակում և միանգամայն արժանի դարձան համաշխարհային հռչակի ու մեծարանքի. դրանք են՝ Մօրիս Մէտէրլինգ և Էմիլ Վերհարն։ Որպէս բանաստեղծ-դրամատուրգ և որպէս բանաստեղծ-քնարերգու, Մետերլինգը (ծն. 1862 թ.) բացի իր բարձր տաղանդից և բեղմնաւոր գրական գործունէութիւնից եւրոպական նոր գրականութեան մէջ նշանաւոր տեղ է գրաւում և այն պատճառով, որ նա հանդիսանում է սիմբոլիք գրականութեան, սիմբոլիզմի խոշորագոյն ներկայացուցիչը։ Նրա ուրոյն և ինքնայատուկ գեղեցիկ ոճով գրված պիէսները՝ լի հոգեբանական ապրումներով՝ միանգամից ընդհանուրի սեփականութիւն դարձան և թարգմանվեցին շատ լեզուների։ «Մոննա-Վաննա», «Ժուազել», «Քոյր Բիաթրիսա», «Կապոյտ թռչուն» և ուրիշ մի շարք դրամատիք գրուածքներ գեղարուեստական նուրբ տեսարաններով, մարդկային հոգու առեղծուածները մեկնաբանող ու հարազատօրէն արտացոլոց—հանդիսանում են ժամանակակից դրամատուրգիայի գոհարներ։ Մետերլինգ բացի թատերական գործերից ունի նաև մի քանի շահեկան աշխատութիւններ բարոյագիտական հարցերին նուիրված, ինչպէս «Tresor des humbles», «Sagesse et destinée», «Double jardin» և այլն։

Էմիլ Վերհարն (ծն. 1855) նշանաւոր է որպէս «Երիտասարդ Բէլգիայի» գրական հոսանքի աւագագոյն ներկայացուցիչը։ Նրա քնարի հնչիւն լարերն են «կեանքի այլանդակութիւնների դէմ զաղափարի ծարաւութեան զգացմունքը», «դաշտային սուրբ աշխատանքի և մեծ քաղաքների գայթակղեցուցիչ բարքերի» պայքարը, «խռովայոյզ

որոնց ոգու և մարմնական հաճոյքներով յղփացածներին» մարանչումը։

Ժամանակը չէ այժմ այստեղ երկար կանգ առնել բելգիական այս երկու գրական մեծութիւնների վրա, պարփակենք մեր տեսութիւնը մի քանի խօսք էլ ասելով գեղարուեստի մասին։

Երբ դեռ Բելգիան այժմեան քաղաքական կազմակերպութիւնը չունէր ու Ֆլամանդները առանձնապէս իրանց հայրենիքն ունէին Ֆլանդրիան, այդ ժամանակներում նկարչութեան մէջ համաշխարհային անուն ստացաւ Ռուբենսը (1577—1640), որի անհեստանոցից դուրս եկան 1500-ի չափ պատկերներ։ Այս հանճարեղ գեղարուեստագէտից և նրա աշակերտներից յետոյ Բելգիայում երկար ժամանակ նկարչութեան մէջ քիչ-շատ յայտնի անուն չերևաց. մէջ ընդ մէջ երևացողներն էլ ինքնուրոյն դէմքեր չէին, այլ Ֆրանսիական գեղարուեստի հլու հետևորդները։ Անցեալ դարի վերջերից արդէն նոյն Ֆրանսիան ունեցաւ բարերար ազդեցութիւն իր հարևան ժողովրդից ծնվելու այնպիսի մեծ արուեստագէտներ, ինչպիսիք են Կոստ. Մեսնիէ քանդակագործը և Բոպա նկարիչը։ Մեսնիէի բրիչը այն նիւթերն էր վերցնում քանդակելու, ինչ որ Ֆրանսիացի նոյնչափ յայտնի Միլիէի վրձինը՝ նկարելու բանւոր, գեղջուկ, երկրագործ-աշխատաւոր, փողոցի կեանք. այդ իսկ պատճառով էլ գեղարուեստական քննադատները Մեսնիէին անուանում են քանդակագործութեան Միլիէ։

Նորագոյն բելգիական գեղարուեստի մէջ պակաս յայտնի չեն նաև Էմիլ Կլաուս, Ֆերնանդ (նատուրալիստ և իմպրեսիոնիստ), Ֆերնանդ Կնոպֆ (սիմվոլիստ), Վիներ (փորագրիչ)։

Ճարտարապետութեան մէջ ներկայ Բելգիան պարծանքի առարկաներ չէր ունենայ, եթէ նրա նշանաւոր քաղաքներում կանգնած չը լինէին ճարտարապետական այն հնաշխարհիկ կոթողները։ Նրանք մնացած լինելով իրանց նախորդներից՝ այժմ որպէս մշտական ու քարացած դաս աւանդվել կարող են Բելգիայի երիտասարդ արուեստագէտներին։ Եւ եթէ հին վարպետները կանգնեցրել են Բրիւսսէլի հոյակապ «Hôtel de ville»-ը և «Maison du Roi»-ն, նոր հանճարեղ արուեստագէտներն էլ կանգնեցրել են «Palais de Justice»-ի նման պանծալի շէնքը։ Մարդ սոսկում է թէ ի՞նչ վանդալ ձեռքեր են, որ կործանել կամ վնասել են աշխատում գեղարուեստական այսպիսի հրաշալիքներ։

Բելգիական երաժշտութիւնը, մանաւանդ թատրոնը, բանաստեղծութեան և պլաստիք արուեստների համեմատութեամբ խեղճ է. բայց և այնպէս բաւական մեծ համբաւ ունի Բրիւսսէլի կոնսերվատորիան, որը պահվում է արքունական հաշվով։ Կառավարութիւնը տարեկան մէկ և կէս միլիոն ֆրանկ է տալիս գեղարուեստական գործի առաջադիմութեան համար։

Գալէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ահեի խաւարումն Թէոդոսիայում

Թէոդոսիա, 9 օգոստոսի

Ամսոյս 8-ին, ժամը 2-ին Թէոդոսիայում տեղի ունեցաւ արևի լիակատար խաւարումը։ Դեռ որոշված ժամից առաջ քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը և օտարերկրացիները՝ առանց հասակի ու սեռի խտրութեան՝ դուրս էին թափվել փողոցները, որոնցից շատերը պարզ դիտելու համար հաղուագիւտ երևոյթը՝ բարձրացել էին լեռները, մի քանիսը դաշտերում և մի քանիսն էլ մակոյկներ նստած ծովի վրայից էին դիտում։ 2 ժամ 10 րոպէին արդէն սկսեց արևի մի կողմը սևանալ ու հետզհետէ ծածկվեց արևի կէսը և ստացվեց ճիշդ մի կիսալուսին։ և երբ արևը մեղ երևում էր 6 օրվայ մահիկի չափ՝ օդը ըստ սաստիճանաբար սառչել, լոյսի գոյնը նմանվեց երեկոյեան վերջալոյսի, դեռ մի քիչ աւելի դեղին գոյնով. օդում թռչող թռչունները մինչև անգամ զգալով արտասովոր գիշերվայ մօտ լինելը՝ սկսեցին իրանց ծղրտոցով խառնվել իրար և գլուխ կորցրածի նման աջ ու ձախ չուել։

3 ժամ 20 րոպէին արևը բոլորովին ծածկվեց և դարձաւ կատարեալ գիշեր։ Բացի փողոցներից՝ բոլոր շէնքերում լոյսերը վառվեցին։

Այդ ժամանակ արդէն առանց ապակու հասարակ աչքով էինք նայում արևին, որ ուղիղ 2 րոպէ ամբողջապէս մնաց ծածկված. միայն լուսնի չորս կողմից հազիւ նկատվում էր արևի չը ծածկված ճառագայթների սպիտակ փայլը, որը մի սքանչելի տեսարան էր առաջացրել, ճիշդ կլորաձև ծիածանի նման։ Այդ միջոցին աստղերը պարզ երևում էին։

Երկու րոպէից յետոյ սկսեց նոյն ձևով բացվել՝ ինչպէս որ սկզբում փակվեց, և մինչև ժամը 4-ը արևը կատարելապէս պարզվեց և իր սովորական ձևն ստացաւ։

Թէև սկզբում երկինքը բաւականին ամպոտ էր և երբեմն ծածկում էր մարդկանց աչքից այդ հազուագիւտ դէպքը, բայց այն րոպէին, երբ պիտի սկսվէր խաւարումը համարեա չքացան ամպերը։ Արևի այդ խաւարումը լուսանկարողներ էլ եղան։ Ծովի ուղղութեամբ օդի բարձրութեան մէջ նը-կատվեցին 3 աէրոպլան, որոնք ըստ երևոյթին աւելի բարձրից էին դիտում արևի խաւարումը։ Կիւրեղ ս. Աբգարեան

Հայրը թաղում է առանց խահանայի իր աղջկան

Կիսլովոդսկ, 6 օգոստոսի

Ամսոյս 1-ին վախճանվում է երկար տարիներով Կիսլովոդսկում ապրող հադրութեցի Մանաս Մարտիրոսեանի աղջիկը. հեռաւոր օրը առաւօտեան հանդուցեալի հայրը հեռախօսով իմաց է տալիս Պետիգորսկի քահանային—որ մինոյն ժամանակ հովիւ է և Կիսլովոդսկի հայերի—որ գայ և հողին յանձնի իր աղջկան. քահանան Պետիգորսկում, ինչպէս լսեցի, ծիսակատարութիւն ունենալու պատճառով ուշանում է, իսկ հանդուցեալի հայրը ճարահատեալ ինքն իր ձեռքով հողին է յանձնում աղջկան։ Քահանան գնում է Կիսլովոդսկ այն ժամանակ, երբ անմխիթար հայրը ամեն ինչ իր ձեռքով վերջացրած է լինում։

Առաջ բերելով այս ցաւալի դէպքը, ես սրանով բնաւ միտք չունեմ մեղադրել տէր հօրը, քանի որ նա ծանրաբեռնված է Պետիգորսկի, Ծելեզնովոդսկի, Կիսլովոդսկի և այլ տեղերի հայ համայնքների հովուութեամբ։

Ժամանակ է վերջապէս, որ հոգևոր իշխանութիւնը ուշ դարձնի և շտապի օր առաջ հաստատել Կիսլովոդսկի ծխականների կողմից առաջարկված՝ Սաւուրոպոլի հովիւ Ս. Ք. Տէր-Յովհաննիսեանցի և կամ մի այլ անձնաւորութեան, քանի որ պատիւ չէ բերում մեզ հայերիս՝ Կիսլովոդսկի պէս մի վայրում, ուր ահագին թուով օտարազգիներ կան, ոչ միայն հոգևոր մխիթարութիւնից զուրկ մնալ անգամ հանդիսաւոր օրերին, այլ և դեռ ննջեցեալներին թաղել առանց քահանայի։

Անցորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ, ռուսների՝ աւստրիացիների վրա տարած յաղթութեան լուրը ստանալով, քաղաքը, ի նշան ուրախութեան, զարդարված էր դրօշակներով։

◆ Քաղաքագլուխ Ա. Խատիսեանին դիմումներ են լինում, թէ ինչպէս դրամ ուղարկեն Գերմանիայում և առհասարակ արտասահմանում մնացածներին վերադառնալու համար։ Այդ առիթով քաղաքագլուխը դիմել է փոխարքայի քաղաքացիական մասի օգնական հօֆմէյստէր Ն. Լ. Պետերսոնին։ Վերջինս յայտնել է, որ այդպիսի ցուցմունքներ ստանալու համար հարկաւոր է դիմել փոխարքայի դիւանատան դիպլոմատիական պաշտօնեայ Ս. Ն. Ստոլիցային։

◆ Թիֆլիսի Փոխադարձ Վարկի Ընկ. ծառայողները վճռել են իրանց ռոճիկներից 1% յատկացնել պահեստիների ընտանիքներին։

◆ Մ. Ի. Դոլուխանեան քաղաքագլխի անունով ուղարկել է 200 ր., պատերազմից վնասվածներին օգնող կոմիտէին յանձնելու համար, և 100 ր.՝ զէնքի կանչված պահեստիների ընտանիքների օգտին։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող կոմիտէը նուիրատուութիւններ է ստացել հետևեալ անձերից. Բ. Լ. և Ս. Մ. Մարկովներից՝ 100 ր., «Кавказъ» առևտր. տան ծառայողներից՝ 5 ր., իշխ. Ա. Մ. Արղութեանից՝ 100 ր., Թիֆլիսի առևտրական բանկից՝ 15,000 ր., Բագուի նաւթարդիւնաբերողների խորհրդից՝ 80,000 ր., բար. Ան. Մաք. և Ալ. Ալ. Ֆոն-Կուշենբախներից՝ 1000 ր., Ս. Մ. Լազարեանից՝ 500 ր., «Проводникъ» ընկ. Թիֆլիսի բաժանմունքի ծառայողներից՝ 26 ր. 50 կոպէկ։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող քաղաքային կենտրոնական կոմիտէը Նախալովկայում և Հալաքարում էժանագին ճաշարաններ է բացում։ Ամեն մի ճաշարանից պահեստիների ընտանիքների համար բաց է թողնվելու 600 ճաշ։

◆ Կովկասի անասնաբուժական վարչութեան ծառայողները որոշել են պատերազմի ընթացքում իրանց ստացած ռոճիկից 1% յատկացնել պահեստիների ընտանիքների օգտին։

◆ Թիֆլիսի առևտրական ծառայողների ակումբի վարչութիւնը որոշել է օգոստոսի 15-ից ակումբում խաղացված լոտոյի մուտքից 5% և տարած գումարից նոյնպէս 5% յատկացնել պահեստիների ընտանիքներին խնամող Թիֆլիսի կոմիտէին։

◆ Քաղաքագլուխը համաձայնութիւն է կայացրել էլեքտրաքարշի վարչութեան հետ այն մասին, որ մի առանձին գրքոյկ սահմանվի կոպէկանոց տոմսակներով, ցանկացող ճանապարհորդներին վաճառելու համար։ Այդ տոմսակներից հաւաքվելիք գումարը յատկացվելու է զէնքի կանչված պահեստիների ընտանիքների օգտին։ Այս բանի թոյլտուութեան համար հարկ եղած միջնորդութիւնն է արվել։

◆ Երէկ Գերմանիայից Թիֆլիս վերադարձաւ քաղաքային բժիշկ Իգիթեան և Թիֆլիսի վաճառականների ընկ. քարտուղար Ստ. Գալատեան։

◆ Օգոստոսի 7-ից մինչև 20-ը 2836 ր. նպաստ է տրված պահեստիների ընտանիքների սուր կարիքները բաւարարելու համար։

◆ Պահեստիների նպաստի կարիք ունեցող ընտանիքների թիւը հասնում է 4000-ի, իսկ ամեն մի ընտանիքում, միջին թուով 5 հոգի հաշուելով՝ ստացվում է 20,000 հոգի։

◆ Քաղաքագլուխը միջնորդել է նահանգապետի առաջ՝ թոյլ տալ սեպտեմբերի 22-ին, պատերազմից վնասվածներին օգնող քաղաքային կոմիտէի օգտին, «Դրօշակների օր» սարքել։

◆ Ոստիկանապետը հրամայել է ոստիկանական բոլոր պաշտօնեաներին հսկել հացթուխների վրա, որ սրանք հացը իր սակագնով վաճառեն և ամեն տեսակ հաց բաւական քանակութեամբ և, բացի այդ, կէս կոպէկանոցներ պահեն «զդաչէ» տալու համար։

◆ Թիֆլիսում այս աշնանը լուսանկարչական ցուցահանդէս կազմակերպող կոմիտէը 48 խնդիր է ստացել այլ և այլ քաղաքներից, որոնք ցանկութիւն են յայտնում ցուցահանդէսին մասնակցել։ Սակայն պատերազմի պատճառով ցուցահանդէսը յետաձգվելու է մինչև պատերազմական գործողութիւնների վերջանալը։

◆ Ա. Ն. Տէր-Ցարութիւնեան նահանգապետից թոյլտուութիւն է խնդրում Թիֆլիսում ամենօրեայ, ռուսերէն և հայերէն լեզուներով թերթ հրատարակելու «Նոր օր» անունով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱԲԲԻՆՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՑԳԻՑ

Թիւրքական պատերազմական պատրաստութիւնները

III

Էրզրում, 7 օգոստոս

Կարաւուրգանի դիմաց գտնուած Քէօթէկը այժմ զինուորական կարգադրութիւններու կեդրոն կարող է նկատուիլ. մինչև այսօր հոն ուղարկուած են Էրզրումէն 130 ձիաւոր միայն հրացան. ամեն մի բեռը բաղկացած 2 սնդուկներէ և ամեն մի սնդուկի մէջ 10 հատ ինքնարձակներ հրացան։

Գերմանական հինգհարուածեան մաուզերը թիւրքական բանակի մէջ պաշտօնապէս ընդունելէն առաջ՝ թիւրքերը զինուած էին ինքնարձակներով. այդ հրացաններէն այժմ բաւականին թուով կայ, և առանցմով է, որ զինուած է ներկայ կանոնաւոր ժանդարմերիան և կը զինեն ներկայ ընդհանուր զօրահաւաքին սահմանի պահեստիները։ Այդ հրացաններու ծանրութիւնն է 3 օխա 250 դիրեմ, որ մօտաւորապէս ռուսական 11 ֆունտին հաւասար է. բացի այդ 2600 հրացանները, որ ստացուած են հոն, ուղարկուած է և 61 տայլ այդ հրացաններու ռազմամթերքը (փամփուշտները)։

Այդ շրջանի բոլոր պահեստիները Քէօթէկ է, որ զէնք կը ստանան և կը ցրուին իրենց գիւղերը։ Սահմանի մէկ քանի գիւղերու մէջ—ինչպէս օրինակ՝ Մժնկերտ (Թիւրքական), Համաս, Նարման—ինչպէս և Քէօթէկի մէջ պահեստիներէն կը պահուի կազմ ու պատրաստ 300-ական մէկ-մէկ վաշտ իրենց սպաներով։ Խորասան գիւղը, որ Մժնկերտի (ռուսական) դէմ կիրնայ (Զվինի բերդէն ձախ), զինուորական կեդրոնատեղի է և հոն ալ աւելի պահեստիներ ուղարկուած են. իսկ Զվինը կարմրացուի, խրամատներ կը շինուին։ Այս Զվինը իր խաղը դերը ունեցեր է անցեալ ռուս-թիւրքական պատերազմին. այնտեղ է խաղը դոհերտուեր ռուսը, և այդ Զվինով, որ ցայսօր աւերակ էր, կը պարծենայ Թիւրքը։

IV

Առանձին հոգածութեան առարկայ է դարձած Վանը. հոն ևս, ինչպէս կը գրեն մեր բարեկամները, նման միջոցներ ձեռք կառնեն, և այդ՝ կրկնակի պատճառներով։

Նախ Վանայ ամրութիւնները այնքան աւժեղ չեն և ռուս-թիւրքական պատերազմէն յետոյ այդ վայրը նուազ ուշադրութեան առարկայ է դարձած և երկրորդ՝ շնորհիւ տեղական կազմակերպութիւններու միահամուռ ջանքերուն՝ Վանը զօրք չէ տուած այս դալիք պատերազմի առթիւ Թիւրք կառավարութեան, պատճառաբանելով որ պատերազմի պարագային կրնայ քիւրդական շարժումը ծայր տալ և անպաշտպան հայու գլխուն վրայ փշրուիլ, իսկ նման շարժման դիմադրութիւնը աւելի քան անհրաժեշտութիւն կը ներկայացնէ, և կառավարութիւնը ճարահատեալ՝ ստիպուած է եղեր յարմարուիլ վանցիներու կամքին, միայն եղելութիւնը քողարկելու համար գործին տարբեր դունաւորում տալով և տեղական պահեստիներէն տեղական ժանդարմական առանձին գունդեր կազմելով։

Այս քանի օրուան ընթացքին մէջ Էրզրումէն Վան փոխադրուած է պարսկահպատակներու ուղտերու միջոցաւ 300-ի չափ ուղտաբեռ զէնք ու ռազմամթերք, չհաշուելով նախկին ուղարկուածը և դեռ ուղարկուելիքները։ Ասոր հետ միասին՝ Վան են նշանակուած գերմանացի 20 զինուորականներ (ղեկավարելու տեղական զինուորական ոյժը) Էրզրում հասած այն 60-էն աւելի գերմանացի սպաներէն, որոնք գիշեր ու ցորեկ քուն չունին և միայն կաշխատին աճապարեցնել ռուս-թիւրքական պատերազմը՝ որքան հնարաւոր է։

V

Պատերազմը վարելու համար անհրաժեշտ է դրամ, դրամ և նորէն դրամ, որ բարեբաղդաբար չունի Թիւրք կառավարութիւնը. բայց պատերազմը անխուսափելի է, և ան այդ դրամը պիտի գտնէ, եթէ ոչ հնչիւն ոսկիներու ձևով, գոնէ պատերազմին անհրաժեշտ մթերքներու ձևով։ Եւ ան գտած է այդ միջոցը. առանց բացառութեան կը գրաւէ բոլոր հարուստներէն ու վաճառականներէն այն ամենը, ինչ պէտք կուգայ պատերազմին։ Զարաբաստիկ խարականութիւնը գեավուրի և հաւատացեալի միջև միշտ եղած է Թիւրք կառավարութեան յատկանշական կողմը՝ անոր գոյութեան ամբողջ պատմական կեանքին մէջ և այսօր ալ նոյն երանգով ու նոյն ոյժով աւելի ևս թափ առած կը շարունակուի։ Քրիստոնեաներու ունեցածն ու ինչքն աւելի արագ ու մեծաքանակ կը գրաւուի կառավարութեան կողմէ, քան իսլամինը։ Այսպէս՝ գրաւեր են կաու, չուխա, շաքար, երկաթ, բրինձ, թէյ, սուրճ և այլ նիւթեր Զաքարեաններէն 50,000 ր., Գաւաֆեաններէն 40,000-ի, Թրիանդաֆիլիդիս Կոստիէն (յոյն) 70,000-ի, ռուսահպատակ Քափանաններէն 70,000-ի, ձերբակալելով գործերու ընդհանուր կառավարիչ ռուսահպատակ Ամիր-օղլուն, և այդ՝ միայն անոր համար, որ հակարձակութիւն է ունեցեր յայտնելու, որ սպրանքը ռուսահպատակի է։ Ինչպէս կը լսենք, ձերբակալուածն այժմ երաշխաւորութեամբ արձակուած է, պայմանաւ որ յետոյ դատաւորի զինուորական դատային դատարանով։

Ռուսական հիւպատոսին միջամտութեանը նշանակութիւն չեն տար, արդէն հիւպատոսին կեանքն անգամ մագէ մը կախուած է։ Թիւրքական լրբութիւնը այն ատիճան առաջ գացեր է, որ առանց ամչնալու բացարձակ կը յայտարարեն, թէ պատերազմ սկսուելու պարագային առաջինը ռուսական հիւպատոսը և զինուորական կցորդը պիտի կախեն, առանց նկատի ունենալու այն հանգամանքը, որ իրենց հիւպատոսներն ու դեսպանը Ռուսաստանին մէջ են, և ռուս կառավարութիւնը յիմար չէ, որ ազատ արձակէ զանոնք՝ մինչև իր հիւպատոսներու վերադարձը ռուսական սահման։

Զհաշուելով այն մանր ու մունը գրաւումները, որ եղած են Թիւրք կառավարութեան կողմէ հայ վաճառականներէն, յիշատակենք և «Լոյս» ընկերութենէն գրաւուած 200,000 բուբլիի չափ ապրանքը։

Եւ այդ գրաւումները ոչ միայն Էրզրումի, այլ և Թիւրքիոյ բոլոր անկիւններու մէջ։ Գաւառներէն և սահմաններէն եկած տեղեկութիւնները կը ճշդեն մեր գրածները. ուստ վաճառականներու հաւատարմատար՝ եղբարք Գալանճեաններէն գրաւուած են Քէօթէկի մէջ 70,000 ր. ապրանք, Պարունակեաններէն 45-էն 50,000-ի, յոյն Անուֆրիեվէն 165,000-ի և այլն և այլն. Էրզրումի մէջ շատեր, տեսնելով որ միևնոյն է, կառավարութիւնը խանութներէն ամեն կտոր կը վերցնէ, յանձնած են իրենց մագազիններու բանալիները և գրաւման անգամ ներկայ չեն եղած։ Այսպէս թալանի և այն ալ անխիղճ ու անողորմ թալանի են ենթարկած Էրզրումի պատկառելի ծերունի յայտնի վաճառական և զինուորական բոլոր գնդերու կապալառու Տէր-Ազարեան Բարսեղ աղայի ամբողջ չուխայի պահեստը։ Կնքել են մահուան սպառնալիքով Զիլինկիրեան Աստուածատուր էֆ.-ի (ատենապետ քաղ. ժողովոյ) հացահատիկներու շտեմարանը, որ մինակ կարող է ամբողջ զօրքը Էրզրում պահել 15 օր։

Ասոր հետ միասին՝ Զարդի ուրուականը կանգնած է Էրզրումցիին գլխուն, և ան իր օրերը կը համրէ։

Ա. Կ.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատամնաբուժարան

Հիմնված ատամնաբոյժ

Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ

Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 76

Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ամբողջ ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է քան հատատված տակագնի։

Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Բ. Բ. Պիրագովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։

Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ ճա-տեխնիկական աշխատանքներ և շտապ վերանորոգումներ 8 ժամվայ ընթացքում։

(օ. մ.) 755. 100—7

Ներսիսեան դպրոցի հրատարակութեամբ լոյս տեսաւ.

ՀԱՅ ԼԵԶՈՒ

(Հայոց միջնակարգ դպրոցների Դ. դասարանի դասագիրք և Բանահիւսութեան ամփոփութիւն)։

Կազմեց Գ. ՀՈՎՈՒՆԵԱՆ, դասատու Ներսիսեան դպրոցի։

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ։

(կ.չ.) 3—1

Հարկաւոր է գիմնազիաստ և փոքրաքանակ

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Գաւառական դպրոցներից մէկում ուսանելու դասաւանդելու համար։ Գայմաններին մասին դիմել «Մշակի» գրատենակ։

794. 1—1

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Ընդունելութեան քննութիւնները և վերաքննութիւնները սկսվելու են օգոստոսի 26-ից։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 1-ից։

(շ.ա.հ.) 791. 5—1 Տեսուչ դպրոցի՝ Ս. ԱԲՈՎԵԱՆ

ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

ԳՐԻԳՈՐԻՍ աւ.-քահ. ԵՐԶՆԿԵԱՆՑԻ

1) «ԹԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ», ըստ Գոլդենբէրգի, I մասն. I և II տարի, 9—17 տիպ. . . . 30
2) «ՆՈՌՆԵՐ», II մասն, III և IV տարի, ըստ Գոլդենբէրգի, 5—9 տիպ. . 35
3) «ՈՒՍՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ», II տիպ. պատկերազարդ. . 50
4) «ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ», II տիպ. . . 50
5) «ՏԱՐՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ», շատ դիւրամատչելի, ամբողջ կուրս. . 60
6) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ». . . . 1 ր.

Վաճառվում են իր մօտ (Грибоѣдовская, 20) և «Կենտրոնական», «Գիր» ու «Գաւառական բերդ» գրավաճառանոցներում։ Հեղինակից գնողներին 30% զեղչ. կարելի է ստանալ վերադիր վճարով։ Դրանք բոլորն էլ մեր դպրոցներում ընդունված են։ 790. 6—

Երևանի Հ. Հ. Թեմական Դպրանոցի Վարչութիւն

սրանով յայտնում է, որ դպրանոցի Բ. և Գ. դասարաններում ընդունելութիւն չը կա միւս դասարանների համար խնդիրները ընդունվում են մինչև օգոստոսի վերջը. ցանկացողները պէտք է խնդրի հետ ներկայացնեն ծննդեան և ծագկի վկայականները։ Սեպտեմբերի 1-ից լինելու են նորեկների եւ վերաքննելիների քննութիւնները։ Նշանակած ժամանակից ուշ եկողների խնդիրները չեն ընդունվում։

(Ե.տ.) 759. 4—4 Տեսուչ Դպրանոցի՝ Արշակ Զիլինկարեան

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

ԹԻՖԼԻՍ, Միխայէլեան պր. 32/2. Տելեֆոն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Ճառագիները հետևեալներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկեան, բանկային և գործարանական). 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համրիչի վրա. 7) Գայնչագրութիւն (ամենավառ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Տոպրագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բեմինգտոն և ուր.) և 4) Առևտրագիր. Օտար լեզուներ՝ թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դատ-դատ։ Ունկնդիրների թիւը շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և արվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունապահներ։ (Հնթացեալ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից նախուութեամբ աչքի ընկնողներից։ 67 հոգի իդական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

720. 0—15

(օ. մ.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный